

ւերականութեան (իրապէս Արիստոտելիսի գրչին պատկանելու) խնդրին:

Մեկնութեան ներածական մասն աւարտուած է մէկ այլ մեկնութիւնների համար սովորական հարցի մանրամասն քննարկմամբ (երրորդ եւ չորրորդ պրակներ), այն է՝ արդեօք տրամաբանութիւնն իմաստասիրութեան մասն է, մասնի՞կ, թէ՞ գործիք: Ամբողջ մեկնութիւնը բաղկացած է տասնչորս պրակներից եւ թերութեան տպաւորութիւն է թողնում. հնարաւոր է՝ այն ընդամէնը մի մասն է աւելի ծաւալուն մի գրուածքի, որի շարունակութիւնը կորած է:

Հինգերորդ պրակում Դաւիթը մեկնում է «Առաջին Անալիտիկայի» սկիզբը՝ կրկին իր դիտողութիւնները կապելով «դիտաւորութեան» ու «պիտանացուի» հետ եւ ապա չորս լուծում առաջարկելով այն խնդրին, թէ ինչու Արիստոտելիսը, երբ ասում է՝ պէտք է սահմանել՝ ինչ է նախադրեալը (πρότασις - «նախադասութիւն» կամ «առաջարկութիւն»), եւ ինչ է սահմանը (ὅρος), եւ ինչ է սիլլոգիզմը (συλλογισμός), սահմանը դնում է նախադրեալի ու սիլլոգիզմի միջեւ¹¹:

Վեցերորդ՝ շատ կարճ պրակում Դաւիթը բացատրում է «նախադասութեան» կամ «առաջարկութեան» Արիստոտելիսի սահմանումը՝ նշելով, որ այն լինում է երկու հիմնական տեսակի՝ «ստորագական» (κατηγορικός) եւ «ստորադրական» (υποθετικός): Այնուհետեւ եօթներորդ պրակում նա խօսում է նաեւ այլ տեսակների մասին՝ «ապացուցական» (կամ «բացացուցական» - ἀποδεικτικός) ու «տրամաբանական» (διαλεκτικός), եւ «ընդհանուր» (καθόλου), «մասնական» (կամ «ներմաս-

նումն» - ἐν μέρει) ու «անորոշելի» (ἀδιόριστος):

Ութերորդ պրակում մեկնիչն անդրադառնում է «սահմանին» («յոր վերլուծանի նախադասութիւն՝ ի ստորագեալն եւ յենթակայն»)՝¹² այն, այսինքն՝ ենթական կամ ստորագեալը, իբրեւ «նախադասութեան» հիմնական մաս, հակադրելով միւս՝ «չաղկապի» դեր կատարող («իսկ այլքն ամենայն զչաղկապի տեղիսն ունին») կամ քանակն ու որակը ցոյց տուող մասերին: Այս պրակում Դաւիթը խօսում է նաեւ «է» բայի մասին, որ «նախադասութիւններում» առկայ է կամ «զօրութեամբ» - δυνάμει (այսինքն՝ չկայ, բայց ենթադրուած է), կամ էլ՝ «ներգործութեամբ» - ἐνεργεία (փաստացիօրէն):

Իններորդ ու տասներորդ պրակներում քննարկում է սիլլոգիզմի՝ Արիստոտելիսի սահմանումը: Չհամաձայնելով Ալեքսանդրոս Ափրոդիսիացու (Բ-Գ դարեր) հետ, որն, ըստ Դաւիթի, գրել էր, թէ Արիստոտելիսը սահմանում է միայն ստորագական սիլլոգիզմը՝ զանց առնելով ստորադրականը, ինչպէս նաեւ՝ «Եփեսոսիկներ» հետ, որոնք կասկածի էին ենթարկում սիլլոգիզմի գոյութիւնն առհասարակ՝ մեկնիչը փորձում է սիլլոգիզմի սահմանումը բացատրել արտայայտութիւն առ արտայայտութիւն եւ բառ առ բառ:

Տասնմէկերորդ պրակը վերաբերում է այն հարցին, թէ որ սիլլոգիզմն է «աւարտուն» (τέλειος) կամ «անաւարտ» (ἀτελής): Դաւիթը յիշատակում է այս առթիւ Դ դարի իմաստասէրներ Մաքսիմոս Եդեսացու ու Թեմիստիոսի յայտնի վէճը, որի մասին խօսում է նաեւ Ամմոնիոսն Արիստոտելիսի «Առաջին Անալիտիկայի» իր

մեկնութեան մէջ¹³: Ապա Դաւիթը վերադառնում է «առաջարկութիւններին», մասնաւորապէս՝ դրանց միջեւ առկայ տարբերութիւններին՝ բացատրելով, թէ երբ են նախադրեալները «ստորասական» (καταφατικός) եւ երբ՝ «բացասական» (αποφατικός):

Վերջում՝ տասներկուսից տասնչորսերորդ պրակներում, նախ խօսելով «անկարելի բացածութիւն» (εἰς τὸ ἀδύνατον ἀπαγωγῆ - *reductio per impossibile*) տրամաբանական մեթոդի մասին՝ Դաւիթն այնուհետեւ հիմնականում քննում է սիլլոգիզմների մէջ «հակադրութեան» (ἀντιστροφῆ) երեւոյթը («հայր՝ որդւոյ հայր, եւ որդի՝ հօր որդի», «ոչ ոք մարդ քար, եւ ոչ ոք քար մարդ» եւ այլն): Նա առաջադրում է խնդրի քննարկման ութ կէտ, որոնցում տարբեր տեսանկիւններից կանգ է առնում հակադրութեան եւ դրա տեսակների վրայ:

«Մեկնութեան» լեզուն, Դաւիթի միւս գործերի թարգմանութիւնների նման, խիստ յունաբան է՝ հիմնականում տառացի պատճէնում յունարէնից: Յակոբ Մանանդեանն ու Սէն Արեւշատեանն այս թարգմանութիւնները կատարուած են համարում Յունաբան դպրոցի (Ե դարի վերջ - Ը դարի սկիզբ) գործունէութեան երրորդ փուլում (ըստ Մանանդեանի՝ է դարի առաջին կէս¹⁴ եւ ըստ Արեւշատեանի՝ 2 դարի երկրորդ տասնամեակից մինչեւ 600 թ.¹⁵): Դաւիթի երկերը, ըստ նրանց, թարգմանուել են այս փուլի համեմատաբար ուշ շրջանում:

Յունաբան թարգմանութիւնների լեզուն սովորաբար խիստ դժուարհասկանալի է, յատկապէս՝ երբ չկայ հայերէն տարբերակը յունարէն սկզբնազրի հետ համեմատելու հնարաւորութիւն: Դաւիթ Անյաղթի անունով մեզ հասած երկերի հայերէն թարգմանութիւններից երեքի յունարէն սկզբնազրերը պահպանուել են: Դրանք են՝ «Սահմանք եւ տրամատութիւնք իմաստասիրութեան», «Վերլուծութիւն Ներածութեանն Պորփիրի» եւ «Մեկնութիւն Ստորագութեանն Արիստոտելի»: Վերջինս վերագրուել է ինչպէս Դաւիթին¹⁶, այնպէս էլ նրա ժամանակակից էլիսահին¹⁷, որի անունը հայկական աւանդոյթում չի յիշատակուած: Միայն «Մեկնութիւն ի Վերլուծականն Արիստոտելի» երկի յունարէն սկզբնազրին է կորած, ուստի՝ այն Դաւիթի գրուածքներից ամէնից դժուարընկալելին է:

«Մեկնութեան» խրթին բովանդակութիւնը հասկանալուն կարող են օգնել երկու խումբ օժանդակ աղբիւրներ՝ ա) Դաւիթի միւս գործերի յունարէն սկզբնազրերն ու հայերէն թարգմանութիւնները եւ բ) միւս մեկնիչների՝ Ալեքսանդրոս Ափրոդիսիացու¹⁸, Թեմիստիոսի¹⁹, Ամմոնիոսի²⁰,

11 Aristotle, *The Categories, On Interpretation, Prior Analytics*, translated by H. P. Cooke (*Categories and On Interpretation*) and H. Tredennick (*Prior Analytics = APr.*) (Loeb Classical Library), Cambridge (Mass.), London, 1967, p. 199 (24a 12-13)

12 Հմմտ. *APr.* 24b 17 "Ὅρον δὲ καλῶ εἰς ὅν διαλύεται ἢ πρότασις, ὅλον τὸ τε κατηγορούμενον καὶ τὸ καθ' οὗ κατηγορεῖται (Aristotle, *Prior Analytics*, p. 201)

13 Ammonii in Aristotelis analyticorum priorum librum i commentarium, ed. M. Wallies (*Commentaria in Aristotelem Graeca*, IV 6), Berlin, 1899, p. 31.14-23

14 Յ. Մանանդեան, *Յունաբան դպրոցը եւ նրա զարգացման շրջանները*, Վիեննա, 1928, էջ 142-173

15 С. С. Аревшатян, *Формирование философской науки в древней Армении (V-VI вв.)*, Ереван, 1973, с. 187

16 Նոյն տեղում, էջ 273 եւ յաջ.

17 Eliae in Porphyrii isagogen et Aristotelis categorias commentaria, ed. A. Busse (*Commentaria in Aristotelem Graeca*, XVIII 1), Berlin, 1900 (p. 107-255: Eliae [olim Davidis] in Aristotelis categorias commentarium). Ռետելով Բուսսեի՝ Յ. Մանանդեանն այս երկի հայերէն թարգմանութիւնը հրատարակել է Էլիասի անունով՝ *Մեկնութիւն Ստորագութեանն Արիստոտելի ընծայելու էլիսահի իմաստասիրի*, ի յոյս էած Յ. Մանանդեան, Ս. Պետերբուրգ, 1911

18 Alexandri in Aristotelis analyticorum priorum librum i commentarium, ed. M. Wallies (*Commentaria in Aristotelem Graeca*, II.1), Berlin, 1883. տե՛ս նաեւ ծմբ. 2:

19 Themistii quae fertur in Aristotelis analyticorum priorum librum i paraphrasis, ed. M. Wallies (*Commentaria in Aristotelem Graeca*, XXIII 3), Berlin, 1884

20 Տե՛ս ծմբ. 3 եւ 13

յունարէն ἡλίβατος («բարձր») բառը, նուրբ հագագով, հասկացել է իբրև ἡλίόβατος ու թարգմանել «արեգակնակոխ»³⁵:

Մէկ այլ ցայտմ չնկատուած սխալ գտնում ենք մեր խնդրոյ առարկայ՝ «Առաջին Անալիտիկայի» մեկնութեան շատ հետաքրքիր մի հատուածում: Ինչնորդ պրակում Դաւիթը վիճում է «Եփեսոսի կենտրոնը» («Եփեսոսի քրիստոսայք») հետ³⁶, որոնք, ըստ նրա, կասկածի էին ենթարկում սիլլոգիզմի գոյութիւնը: Ներկայացնելով նրանց փաստարկները՝ մեկնիչը, համաձայն հայերէն թարգմանութեան, ասում է. «Ձերովք իսկ ըմբռնեցայք թեւօք ըստ առասպելումն, ո՛վ մակունականք» («Դուք բռնուեցիք ձեր իսկ թեւերով, ո՛վ մակունականներ»)՝³⁷: Այս ձեւով ասոյթն անհաս-

կանալի է, եթէ չասենք՝ անիմաստ, ուստի՝ մենք փորձեցինք այլ հեղինակների մօտ գտնել դրա աղբիւրը կամ ճիշտ տարբերակը, եւ մեր որոնումը յաջողութեամբ պսակուեց: Մ.թ.ա. Ե. դարի յայտնի յոյն ողբերգակ էսքիլոսի կորած երկի մի հատուածում արծիւներն ասում են, թէ իրենք իրենց սեփական փետուրների զոհն են դառնում. «Մեզ որսում են մեր իսկ փետուրներով» (ΤΟΙΣ ΑΥΤΩΝ ΠΤΕΡΟΙΣ ΑΛΙΣΚΟΜΕΘΑ)³⁸: Նրանք ի նկատի ունեն փետուրներով պատրաստուած նետերը: Հայ թարգմանիչը յունարէն πτερόν բառը սխալմամբ թարգմանել է «թեւ», փոխանակ՝ «փետուր» (πτερόν-ն ունի երկու իմաստն էլ): Երեւում է՝ նա կարծել է, թէ խօսքը մարդկային թեւերի մասին է, եւ չի իմացել, որ ասոյթն առնչւում է արծիւների հետ³⁹: Եթէ Դաւիթը լինէր իր գործերի թարգմանիչը, նա հազիւ թէ այսպիսի սխալ թոյլ տար:

Ուշագրաւ է, որ Յովհաննէս Փիլոսոփոսի՝ Արիստոտելէսի «Առաջին Անալիտիկայի» մեկնութեան մէջ (13,2.31.3)⁴⁰, որտեղ առկայ է խնդրոյ առարկայ հատուածի ճշգրիտ զուգահեռը, ΠΤΕΡΟΙΣ բառը փոխարինուած է ΛΟΓΟΙΣ-ով, հաւանաբար՝ մի գրիչի ձեռքով, որն ասոյթը չի հասկացել եւ, բառը փոխելով, «պարզեցրել է» այն.

կունք») բառի վրայ: Հաւանաբար՝ մի գրիչ, չընկալելով «մակունականք»-ը, փոխարինել է այն «աւելի հասկանալի» բառով: Կան նաեւ ուրիշ սխալ տարընթերցումներ՝ «մակունականք», «մակունականք»:

38 Tragicorum Graecorum fragmenta, ed. S. Radt, vol. 3, Goettingen, 1985, p. 123-511 (fr. 139)

39 Հմմտ. Վարդան Այգեկցու «Արծիւ եւ Անտ» առակը (որտեղ ճիշտ օգտագործուած է «փետուր» բառը). «Արծիւն երթար յերկինս եւ հարին գնայ Անտի. եւ նայ զարմացաւ, թէ ո՛վ գայս արար. հայեցաւ եւ տես գնետն՝ զփետուրն իր. եւ ասէ. վա՛յ ինձ, զի յինէն է ահայ պատճառ սպանման իմոյ». Ն. Մառ, Ժողովածոյք առակաց Վարդանայ, Մասն Բ., Բնագիր, Ս. Պետերբուրգ, 1894, էջ 102:

40 Տե՛ս ծմբ. 8

editor M.E. Stone), Chico, California, 1983, p. XVIII

35 Դաւիթ Անյաղթ, Մահմաճը իմաստասիրութեան, էջ 74.20-22. «...Պարտ է յաղթատութենէ փախչել եւ ի մեծակիտեղն անկանել ի ծով եւ ի վիմաց, ով կիտան, հոսիլ յարեգակնակոխ» (մէջբերում մ.թ.ա. Զ. դարի յոյն բանաստեղծ Թեոգրիսից): Հմմտ. որում Դաւիթի թարգմանիչը յետադաս «արեգակնակոխ» որոշիչը քերականորէն չի համաձայնեցրել որոշեալի հետ (ճիշտ կը լինէր՝ «ի վիմաց ... յարեգակնակոխաց»): Հմմտ. Թեոգրիսի նոյն հատուածը՝ Գիրք Պիտոյից, աշխատասիրութեամբ Գոհար Մուրադեանի, Երեւան, 1993, էջ 49, որտեղ ἡλίβατος-ը ճիշտ է թարգմանուած. «...Արծան է յաղթատութենէ փախչել եւ ի մեծն անկանել ծով, եւ կամ ի վիմաց հոսիլ ի բարձանց»:

36 Դաւիթ Անյաղթ, Մեկնութիւն ի վերլուծականն, էջ 94:

37 Մատենադարանի №2368, 7151, 8132 եւ Փարիզի Ազգային գրադարանի № 240/106 ձեռագրերի «մակունականք»-ը (ἐφεκτικολ-ի բառապատճէնում) ճիշտ տարընթերցումն է: Վեներիկի (Դաւթի անյաղթ փիլիսոփայի մատենագրութիւնը, էջ 492) եւ 1967 թ. հրատարակութիւններում ընտրուած է «որպէս մանկունականք» տարընթերցումը, որը գրչական սխալի հետեւանք է («որպէս»-ը, «ով»-ի փոխարէն, նոյնպէս ճիշտ չէ, քանի որ «մակունականք»-ը կոչական է. Դաւիթը դիմում է Եփեսոսի կենտրոնը՝ «ո՛վ մակունականք»: Իսկ «մակունականք»-ն աղասողուած տարբերակ է՝ հիմն «մանուկ» (յոզակիմ) «ման-

φαιμεν ὅτι καὶ ἡμεῖς τοῖς ἡμετέροις ἀλίσκοεθε λόγοις («Ասում ենք, որ նաեւ դուք էք բռնուած ձեր իսկ խօսքերով»):

Դաւիթի Հայերէն «Մեկնութեան» հետ կապուած միւս խնդիրը, որին կուզէինք այս համառօտ յօդուածում անդրադառնալ, երկի հեղինակային պատկանելութիւնն է: Յակոբ Մանանդեանը, «Դաւիթ Անյաղթի խնդիրը նոր լուսաբանութեամբ» վերնագրով իր աշխատութեան մէջ (1904) բնագրական զուգահեռների, ոճական առանձնայատկութիւնների եւ ըմբռնումների ու հայեացքների նմանութեան հիման վրայ հաստատեց, որ միայն Հայերէն թարգմանութեամբ պահպանուած «Մեկնութիւն ի վերլուծականն Արիստոտելի» գրուածքի հեղինակը Դաւիթն է (այսինքն՝ Հարկ՝ չկայ կասկածի ենթարկելու Հայերէն ձեռագրերում երկի վերագրումը նրան)⁴¹:

Այդուհանդերձ՝ տարիներ անց, Յունաբան դպրոցին նուիրուած իր ուսումնասիրութեան մէջ (1928), Յ. Մանանդեանը հերքեց իր իսկ կարծիքն ու եզրակացրեց, որ «Մեկնութեան» հեղինակը ոչ թէ Դաւիթն է, այլ Էլիասը⁴²: Մանանդեանի գլխաւոր փաստարկին⁴³ հետագայում համոզիչ կերպով առարկեց Ալէն Արեւշատեանը⁴⁴:

41 Յ. Մանանդեան, Դաւիթ Անյաղթի խնդիրը նոր լուսաբանութեամբ, Վաղարշապատ, 1904, էջ 10

42 Յ. Մանանդեան, Յունաբան դպրոցը, էջ 59-67

43 Մանանդեանի փաստարկը հետեւեալն է. Դաւիթը Պորփիրիոսի «Ներածութեան» իր մեկնութեան մէջ խոստանում է քննել տրամաբանութեան՝ փիլիսոփայութեան մաս կամ գործիք լինելու խնդիրն Արիստոտելի «Կատեգորիաներ» մեկնութեան մէջ, մինչդեռ Էլիասը խոստանում է այդ անէ «Անալիտիկայի» մեկնութեան մէջ. հետեւաբար՝ մա՛ս, թէ՞ գործիք՝ խնդրոյ մանրամասն քննարկումը պարունակող՝ խնդրոյ մանրամասն քննարկումը վերագրել ոչ թէ Դաւիթին, այլ Էլիասին: Այնուամենայնիւ՝ Մանանդեանը հարցը վերջնականապէս լուծուած չի հարել եւ եզրակացրել է, որ իր «Ենթադրութիւնը հաստատելու համար հարկատր են եւ ուրիշ վկայութիւններ». Յ. Մանանդեան, Յունաբան դպրոցը, էջ 67:

նր⁴⁴ կրկին արձանագրելով, որ «Մեկնութեան» հեղինակը Դաւիթն է: Ուշադրութիւնից, սակայն, օտարալեզու գրականութեան դժուարամտչելիութեան պայմաններում, դուրս էր մնացել մի կարեւորագոյն աղբիւր, որ անփոխարինելի է Հարցի ցանկացած լուծման համար, այն է՝ Արիստոտելէսի «Առաջին Անալիտիկայի»՝ Էլիասի մեկնութեան պահպանուած յունարէն հատուածը, որ 1961 թ. հրատարակել է Լ. Գ. Վեստերինկը⁴⁵:

Այդ հատուածն ընդգրկում է առաջին պրակը, որտեղ քննարկուում է տրամաբանութեան՝ փիլիսոփայութեան մաս կամ գործիք լինելու հարցը⁴⁶: Հետեւում է առաջին պրակի բովանդակութեան մի ամփոփում (Ἐπιτομή), որից յետոյ՝ երկրորդ պրակը ոչ լրիւ, որում խօսուում է «դիտաւորութեան» (ὁ σκοπός), սիլլոգիզմի հինգ կամ երեք տեսակների եւ այն հինգ ունակութիւնների մասին, որոնցով մարդը գիտելիքներ է ձեռք բերում:

Այս յունարէն հատուածի ու Հայերէն «Մեկնութեան» միջեւ բազմաթիւ բառացի զուգահեռներ կան, որոնց հիման վրայ Մայքլ Փափագեանը, Journal of the Society for Armenian Studies-ում⁴⁷ տպագրուած իր յօդուածում, հեղինակային պատկանելու-

44 Դաւիթ Անյաղթ, Մեկնութիւն ի վերլուծականն, էջ 10 եւ յաջ., С. Аревшатян, Формирование философской науки, с. 273 եւ յաջ.

45 L. G. Westerink, "Elias on the Prior Analytics," Mnemosyne, ser. 4, vol. 14, Leiden, 1961, p. 134-139. Վերահրատ.՝ L. G. Westerink, "Elias on the Prior Analytics" in Texts and Studies in Neoplatonism and Byzantine Literature; Collected Papers by L. G. Westerink, Amsterdam, 1980, p. 59-72

46 «Տրամաբանութիւնը փիլիսոփայութեան մա՛ս, թէ՞ գործիք» հարցի մասին տե՛ս P. Hadot, "La logique, partie ou instrument de la philosophie?" dans Simplicius, Commentaire sur les Catégories, p. 183-188:

47 Michael G. Papazian, "The Authorship of an Armenian Commentary on Aristotle's Prior Analytics" in Journal of the Society for Armenian Studies, vol. 10 (1998, 1999 [2000]), p. 55-62

նից յետոյ, թւում է՝ էլիասն աւելի շատ հակուած է այն տեսակէտին, թէ տրամաբանութիւնը ոչ թէ փիլիսոփայութեան մաս է, այլ գործիք: Եւ դա հաստատում է նրա միւս երկը՝ Պորփիրիոսի «Ներածութեան» մեկնութիւնը: Այստեղ էլիասը յիշատակում է «Առաջին Անալիտիկայի» իր մեկնութիւնը, այսինքն՝ խնդրոյ առարկայ գրուածքը՝ նշելով. «Աստժոյ օգնութեամբ «Անալիտիկայի» [մեկնութեան] մէջ ցոյց կտրուի, որ տրամաբանութիւնը ոչ թէ փիլիսոփայութեան մաս է, այլ գործիք»⁵⁷:

2) Ծիշտ է, որ Պորփիրիոսի «Ներածութեան» Դաւթի մեկնութեան յունարէն սկզբնագրի ու հայերէն թարգմանութեան միջեւ նոյնպէս բազմաթիւ տարբերութիւններ կան, եւ որ «հայերէն թարգմանութեան մէջ յաճախ նախադասութիւններ ու պարբերութիւններ են բացակայում, իսկ ուրիշ տեղերում հայերէնում աւելացուած են բացատրական նշումներ ու մեկնաբանութիւններ»⁵⁸: Այնուամենայնիւ՝ հազիւ թէ այդ երկի հայերէն թարգմանութեան մէջ գտնուի յունարէնում բացակայող որեւէ մեծ ու նշանակալից հատուած: Իսկ Արիստոտելի «Առաջին Անալիտիկայի» Դաւթի մեկնութեան մէջ կան նման հատուածներ, որոնք ակնյայտօրէն սոսկ թարգմանչի կամ որեւէ խմբագրի աւելացրած բացատրական նշումներ ու մեկնաբանութիւններ չեն, այլ թարգմանուած են յունարէն կորած սկզբնագրից: Այդպիսի հատուածներ գտնում ենք նոյն «տրամաբանութիւնը փիլիսոփայութեան մաս, թէ՞ գործիք» քննարկման մէջ (նման հատուածները կան նաեւ «Մեկնութեան» մեկնութեան մէջ):

57 *Eliae in isagogen et categorias*, p. 26.36-37 δειχθήσεται γὰρ οὖν θεῶ ἐν τοῖς Ἀναλυτικοῖς ὅτι ἡ λογικὴ οὐ μέρος τῆς φιλοσοφίας, ἀλλ' ὄργανον.

58 M. G. Papazian, "The Authorship," p. 61

տուածները մէկն արդէն մէջբերեցինք քիչ առաջ): Ահաւասիկ՝ մի ուրիշ օրինակ. Դաւթի ընդմեջ է արիստոտելականների փաստարկները: Նրանք ասում են. «Եթէ երկու արհեստ գոյով, եւ միւսն պիտանանայ միւսոյն կատարման, որպէս գործուոյ, յոռի⁵⁹ գոյ ասի այն՝ որում պիտանանայ, քանզի յոռի ասի գոյ սանձարարականն քան զճիականն»⁶⁰: Պատասխանելով՝ Դաւթը, ի տարբերութիւն էլիասի⁶¹, բերում է «իրենցից ոմանց» («ոմանք ի մերոցն») առարկութիւնը, եւ թէ այդ առթիւ ինչ կարելի է ասել՝ արիստոտելականներին, այնուամենայնիւ, խիստ չհակադրուելու համար. «Առ որս ասեն ոմանք ի մերոցն, եթէ ըստ ձեր բանումդ՝ յոռի ուրեմն է եւ երկնային անձն քան զմարդկայինսն, քանզի երկնային անձն բացակատարեաց զմեր մարմինս, որում որպէս գործուոյ պիտանանայ մեր հոգիս: Առ որս ասելի է, թէ երկնային անձն ոչ միայն զմեր մարմինս բացակատարեաց, այլ եւ զանբանիցն եւ զտնկոցն: Իսկ սանձարարականն՝ սանձս միայն առնէ, այլ եւ ոչ գոյն, եւ որ պիտանանայն սանձաց զճիականն»⁶²: Այս հատուածի բովանդակութիւնից յստակօրէն երեւում է, որ այն կար յունարէն սկզբնա-

59 θοοτή = ἀτιμότερος («պակաս յարգի»):
 60 «Եթէ երկու արհեստ կան, եւ որոնցից մէկը միւսի արդիւնքի կարիքն ունի՝ իբրեւ գործիքի, ապա, ասում են՝ այն, որի կարիքը [միւսն] ունի, պակաս յարգի է, քանզի, ասում են՝ սանձագործութիւնը պակաս յարգի է, քան ձիաբուծութիւնը»:
 61 L. G. Westerink, "Elias on the Prior Analytics," p. 68 (135).26-30
 62 Դաւթ Անյաղթ, *Մեկնութիւն ի վերլուծականն*, էջ 60 («ի պատասխան՝ մեզմից ոմանք ասում են, թէ՛ ուրեմն, ըստ ձեր խօսքի, երկնային հոգին է՞լ է պակաս յարգի, քան մարդկայինը. քանզի երկնային հոգին ստեղծեց մեր մարմինը, որի կարիքը, իբրեւ գործիքի, ունի մեր հոգին: Ի պատասխան՝ կարելի է ասել, թէ երկնային հոգին ոչ միայն մեր մարմինն ստեղծեց, այլեւ անասունների ու բոյսերի: Իսկ սանձագործութիւնը միայն սանձեր է պատրաստում եւ ուրիշ ոչինչ, եւ սանձերի կարիք ունի ձիաբուծութիւնը»):

գրում, որից եւ խիստ յունարան լեզուով թարգմանուել է հայերէն: Աւելին՝ այս հատուածը նոյնպէս վկայում է «մաս, թէ՞ գործիք» հարցի վերաբերեալ էլիասի ու Դաւթի տարբեր կարծիքների մասին, քանզի էլիասը, իր ոչ այնքան որոշակի դիրքորոշմամբ կամ, արիստոտելականների նման, «գործիքի» կողմնակից լինելով, նրանց բերած՝ սանձագործութեան ու ձիաբուծութեան (χαλινοποιική και ἵππική) օրինակը որեւէ կերպ չի մեկնաբանում: Մինչդեռ Դաւթը ներկայացնում է պատանականներից «ոմանց» առարկութիւնը եւ ապա այդ առթիւ տալիս իր բացատրութիւնը⁶³:

3) Պրակների ու քննարկուող թեմաների հերթականութիւնը երկու երկրում նոյնը չէ: Էլիասն իր մեկնութեան սկզբում (Պրակ Ա – Πράξις⁶⁴ α') քննում է «մաս, թէ՞ գործիք» (μέρος ἢ ὄργανον) խնդրը, մինչդեռ Դաւթը դրան անդադառնում է իր երկի երրորդ ու չորրորդ պրակներում՝ «դիտաւորութեան», «պիտանացուի», սիլոգիզմի տեսակների, մարդկային հինգ ուղղութիւնների, «կարգի», վերնագրի, նակութիւնների, «կարգի», վերնագրի, գլուխների բաժանման ու վաւերականութեան հարցերի մասին խօսելուց յետոյ: Էլիասի ամփոփումը ('Επιτομή)⁶⁵ Դաւթի մեկնութեան մէջ զուգահեռ չունի, եւ էլիասը «դիտաւորութիւնը», սիլոգիզմի տեսակներն ու մարդկային հինգ ուղղութիւնները քննարկում է երկրորդ պրակում: Իսկ երբ, մեզ հասած հատուածի վերջում, նա սկսում է խօսել «պիտանացուի»

63 Այդ բացատրութիւնը չի նշանակում, թէ Դաւթը համաձայնում է արիստոտելականների հետ՝ տրամաբանութիւնը համարելով միայն փիլիսոփայութեան գործիք: Ինչպէս վերը նշեցինք, նա, ինքն իրեն պատուհանների շարքը դասելով, եզրակացնում է, որ տրամաբանութիւնը փիլիսոփայութեան է՛ մաս է, եւ՛ գործիք:
 64 «Պրակ» բառը փոխառութիւն է յունարէն πράξις-ից՝ «դասախօսութիւն», «ընթերցում»:
 65 L. G. Westerink, "Elias on the Prior Analytics," p. 70 (137).5 - 71 (138).13

ցուի» մասին, գրուածքը յանկարծ ընդհատուած է.⁶⁶ Էլիասի մեկնութեան շարունակութիւնը կորած է:

4) Կարելի էր սպասել, որ «դիտաւորութեան» քննարկմամբ սկսուող էլիասի երկրորդ պրակը լիովին կը համընկնի Դաւթի համապատասխան՝ առաջին պրակի հետ: Մինչդեռ այն պարունակում է հատուածներ, որոնց բառացի կամ ոչ բառացի զուգահեռները հայերէն «Մեկնութեան»՝ իրարից հեռու գտնուող մասերում են: Օրինակ՝ առաջին նախադասութիւնը՝ «Առաջին Անալիտիկայի» նպատակը վերաբերում է սիլոգիզմին» ('Ο σκοπός τῶν προτέρων ἀναλυτικῶν περὶ συλλογισμοῦ)⁶⁷, համապատասխանում է Դաւթի առաջին նախադասութեանը. «Դիտաւորութիւն Արիստոտելի ի վերլուծականն՝ է բուն հարկանել զպարզ հաւաքմանէ»⁶⁸: Բայց էլիասի երկրորդ նախադասութիւնը՝ «Քանզի անհրաժեշտ էր, սիլոգիզմի բոլոր մասերից յետոյ (անմիջական մասերից՝ նախադրեալներից, հետագայ մասերից՝ անունից ու բայից, վերջին մասերից՝ պարզ ձայներից), կանգ առնել նաեւ ամբողջ սիլոգիզմի վրայ» (ἔδει γὰρ μετὰ τὰ μέρη πάντα τοῦ συλλογισμοῦ (τὰ προσεχέστατα, τὰς προτάσεις· τὰ πόρρω, ὄνομα καὶ ῥῆμα· τὰ πορρωτάτω, τὰς ἀπλᾶς φωνάς) καὶ περὶ τοῦ ὅλου συλλογισμοῦ πραγματεύεσθαι)⁶⁹, զուգահեռ ունի Դաւթի իններորդ պրակում. «Յետ մասանց հաւաքաբանութեան, զհուպսն ասեմ՝ այս ինքն զառաջարկութիւնս, եւ զհեռին՝ այս ինքն զսահմանս, զայ Արիս-

66 Նոյն տեղում, p. 72 (139).33
 67 Նոյն տեղում, p. 71 (138).15
 68 Դաւթ Անյաղթ, *Մեկնութիւն ի վերլուծականն*, էջ 38
 69 L. G. Westerink, "Elias on the Prior Analytics," p. 71 (138).15-18

Նորութիւնն է, որ հին Հայաստանի պատմութեան եւ մշակոյթի միայն չնչին մասն է մեզ հասել, բայց որ անակնկալները պաշարը դեռեւս լիովին սպառուած է, ցոյց են տալիս վերջերս ի յայտ եկած հայկական պղնձէ դրամների նոր տիպերը: Նկատի ունենալով այդ թողարկումների մինչ այժմ անյայտ լինելը՝ տպաւորիչ է նաեւ հաշուառուած օրինակների քանակը, որը գերազանցում է վեց տասնեակը: Սա արտաշխեսան թողարկումների կազմի պարզապէս նոր դրամներով համալրուելու փաստ է, այլ հայ արքաների դրամաթողարկման մասին մեր գիտելիքների սահմաններն անսպասելիօրէն ընդարձակող յայտնագործութիւն: Այն նաեւ Արտաշխեսանների անկման շրջանում Հայաստանի քաղաքական եւ մշակութային բարդ իրավիճակի վերաբերեալ մեր պատկերացումներն էապէս հարստացնող նիւթական վկայութիւն է:

Շուրջ չորս տարի առաջ Երեւանի «հին դրամների շուկայում» յայտնուեցին մանր պղնձէ դրամներ, որոնք դիմերեսին ունեն հայկական թագ կրող արքայի դիմապատկեր: Դրամներն, ըստ դարձերեսի պատկերատիպերի՝ շուն, մեղու, թռչուն (արծիւ) եւ կիսադէմ գլուխ, կազմում են չորս խումբ: Գլխի պատկերով դարձերես ունեցող դրամների դիմերեսին արքան ներկայացուած է դէպի ձախ, միւս խմբերում՝ արքայի գլուխը դէպի աջ է¹: Թողարկումները կապուած են միմեանց հետ պատրաստուածքի նմանութեամբ, արքայի դիմապատկերների որոշակի ընդհանրութեամբ, թէեւ դրանցում կան տարբերութիւններ, որոնց մասին կը խօսուի ստորեւ: Իսկ գլխաւոր առանձնայատկութիւնը՝ ա-

րամէականին նմանող տառերից բաղկացած գրութիւններն են:

Ցաւօք, դրամների յայտնաբերման վայրի կամ վայրերի եւ յայտնաբերման հանգամանքների ու հնագիտական միջավայրի մասին ստորգ տեղեկութիւններ չունենք, ինչի իմացութիւնն, անշուշտ, կարելի էր կարող էր խաղալ դրանց պատմական մեկնաբանութեան խնդրում: Վստահ չլինելով մեզ հասած տուեալների ճշտութեան մէջ՝ կարող ենք միայն ենթադրել, որ դրամների մեծ մասը, որոնք, ըստ երեւոյթին, գտնուել են միասին, բացառուած է՝ որպէս գանձ, ծագում են Արարատի մարզի կամ նրան յարող Կոտայքի մարզի ինչ-որ վայրից, ինչպէս նաեւ՝ Արտաշատ մայրաքաղաքի տարածքից: Վերջինիս սիստեմատիկ հնագիտական պեղումների ընթացքում դեռեւս 1985 թ., յայտնաբերուել են երկու նմանատիպ դրամներ՝ դարձերեսին շան պատկերով, ոչ այնքան լաւ վիճակում: Միւս տիպերը յայտնի դարձան վերջին մի քանի տարիներին: ՀՊԹ-ին յաջողուեց ձեռք բերել 18 նմուշ, 42 դրամ կարողացաւ տարացրումից փրկել Կ. Վարդանեանը, իսկ երկու օրինակ այս տարի յայտնուեց Եւրոպայի դրամագիտական շուկայում: Միաւորելով դրամների վերոյիշեալ շարքին պատկանող մեզ հասանելի ողջ նիւթը՝ սոյն հրապարակման մէջ ներկայացնում ենք դրանց դասակարգուած ցուցակը՝ չափագիտական տուեալներով եւ լուսանկարներով, փորձելով նաեւ դատողութիւններ անել գրութիւնների հնարաւոր ընթերցման, դրամների թուազրման, վերագրութեան եւ դրանց թողարկման պատմական պատճառների վերաբերեալ:

ԴՐԱՄՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Շուն

Դիմերես. Արքայի գլուխը դէպի աջ, մօրուքով, հինգ սրածայր ելուստներ ունեցող հայկական թագով: Թագի վզկալը ուղղաձիգ իջնում է ցած, իսկ ականջակալը վզկալի վրայով թեքութեամբ ուղղուած է դէպի թիկունքը: Արքայական ապարօշը՝ հորիզոնական գծիկի տեսքով, երեւում է թագի ձախ մասում, իսկ գլխի հետեւում պատկերուած է մէկ գծիկով, որը շեղակի ցած է իջնում թագի ստորոտից: Թագի վրայ զարդարանք չի երեւում:

Կատարումը պարզունակ է, պատկերազարկան տարրերը յստակ չեն³:

Դարձերես. Դաշտի կենտրոնական մասում՝ շուն՝ դէպի աջ կանգնած, նեղ իրանով, երկար վզով, ծայրը վեր պարզած պոչով:

Շնից վեր՝ նրա ականջի մօտից սկսած, աջից ձախ ուղղութեամբ արամէերէն գրուած է MLK['] - «արքայ»: Շան տակ կիսաշրջանաձեւ դիրքով գետեղուած է արամէականին նմանող տառերով մէկ այլ բառ, որը, պէտք է ենթադրել, արքայի անունն է:

I.1. 0.56 գ, 10.5 մմ, 1 ժ., Արտաշատ, վերգետնեայ, ՀՊԹ 1987/59: Դարձերես. վերեւում հազիւ նշմարուած են MLK տառերը, ներքեւում գրութիւնը դուրս է մնացել:

I.2. 0.91 գ, 11.2 մմ, 12 ժ., ՀՊԹ 1998/7: Դարձերես. աղօտ երեւում են գրութեան հետքերը:

I.3. 0.97 գ, 10 մմ, 12 ժ., Կ. Վարդանեանի ժողովածոյ: Դարձերես. երեւում են MLK տառերը:

I.4. 1.03 գ, 11.6 մմ, 12 ժ., ՀՊԹ 2000/3/5: Դարձերես. աղօտ երեւում են LK' տառերը, վերեւում, իսկ ձախից եւ ներքեւում՝ մի քանի տառեր:

I.5. 1.10 գ, 11.2 մմ, 2 ժ.: Դարձերես. վերեւում երեւում են MLK տառերը, եւ մի քանի տառեր՝ ներքեւում եւ աջից:

I.6. 1.15 գ, Münzen und Medallien, No. 1504. Դարձերես. վերեւում երեւում են MLK' տառերը, ներքեւում գրութիւնը դուրս է մնացել:

I.7. 1.18 գ, 11.2 մմ, 1 ժ., հին Արտաշատ, վերգետնեայ, ՀՊԹ 1987/58: Դարձերես. վերեւում գրութիւնը դուրս է մնացել, ներքեւում երեւում է 3 տառ:

I.8. 1.2 գ, 11 մմ, 12 ժ., Կ. Վարդանեանի ժողովածոյ: Դարձերես. աղօտ երեւում են MLK տառերը:

I.9. 1.28 գ, 11 մմ, 12 ժ., Կ. Վարդանեանի ժողովածոյ: Դարձերես. վերեւում եւ ներքեւում աղօտ երեւում են մի քանի տառեր:

I.10. 1.33 գ, 11.8 մմ, 1 ժ., Կ. Վարդանեանի ժողովածոյ: Դարձերես. վերեւում գրութիւնը դուրս է մնացել, ներքեւում երեւում է մի քանի տառ:

I.11. 1.39 գ, 11.5 մմ, 11 ժ., ՀՊԹ 1998/5: Դարձերես. վերեւում գրութիւնը դուրս է մնացել, ներքեւում երեւում են 2-3 տառեր:

I.12. 1.4 գ, 12 մմ, 12 ժ., Կ. Վարդանեանի ժողովածոյ: Դարձերես. վերեւում MLK:

I.13. 1.59 գ, 12.1 մմ, 1 ժ., Կ. Վարդանեանի ժողովածոյ: Դարձերես. վերեւում երեւում են MLK տառերը, ներքեւում գրութիւնը դուրս է մնացել:

I.14. 1.6 գ, 11 մմ, 12 ժ., Կ. Վարդանեանի ժողովածոյ: Դարձերես. վերեւում գրութիւնը դուրս է մնացել, ներքեւում երեւում է 2 տառ:

I.15. 1.75 գ, 12.6 մմ, 1 ժ., Կ. Վարդանեանի ժողովածոյ: Դիմերես. արքան երեւում է սրագագաթ խոյրով, ինչը, թերեւս, դրամաթողարկման ժամանակ տեսնիկական արատի հետեւանքով առաջացած

խաբկանք է: Գրուածիւնները գրեթէ չեն երեւում:

I.16. 1.75 գ, 12.4 մմ, 12, ժ., Հին Արտաշատից, Կ. Վարդանեանի ժողովածոյ: Համեմատաբար ամենալաւ պահպանուած նմուշն է, որի դիմերեսին MLK՝ բառն ընթերցւում է ամբողջութեամբ, իսկ ներքեւում երեւում են 3-4 տառեր:

Թռչուն

Դիմերես. Արքայի կիսանդրին դէպի աջ, մօրուքով, Հինգ սրածայր, երբեմն՝ ծուռուծուռ, ելուստներ ունեցող բարձր ու նեղ հայկական թագով: Ծակատային մասում կայ դէպի վեր կորացող «չքոցիկ»: Թագի ականջակալն ուղղաձիգ իջնում է ցած, իսկ վզկալը, ականջի մօտ վերջինիս հետ անկիւն կազմելով, թեքութեամբ ուղղուած է դէպի թիկունքը: Ապարօշը՝ երկու գծիկների տեսքով, երբեմն երեւում է թագի ստորին մասում: Թագի վրայ զարդարանք չի երեւում:

Արքայի գլխի դիմաց եւ հետեւում գրուածիւններ:

Դարձերես. Թռչուն (արծիւ) կանգնած ձախ: Գրուածիւններ չկան:

II.1. 0.80 գ, 11.1 մմ, 1 ժ., Կ. Վարդանեանի ժողովածոյ: Դիմերես. գրուածեան աննշան հետքեր գլխի հետեւում:

II.2. 0.8 գ, 12 մմ, 12 ժ, Կ. Վարդանեանի ժողովածոյ: Դիմերես. գրուածիւնը թոյլ նշմարուած է գլխի դիմաց, մասամբ եւ գլխի հետեւում:

II.3. 0.81 գ, 10.9 մմ, 1 ժ., Կ. Վարդանեանի ժողովածոյ: Դիմերես. գլխի հետեւում երեւում են գրուածեան աննշան հետքեր:

II.4. 0.83 գ, 12.2 մմ, 12 ժ., նուէր Ա. Գեորգեանից, ՀՊԹ 20033: Դիմերես. գլխի հետեւում երեւում է գրուածիւնը, դէմքի դիմաց՝ մասամբ:

Այս դրամը եւ դարձերեսին մեղուի պատկերով դրամներից մէկը (III.15) թողարկուած են դիմերեսի նոյն կնիքով:

II.5. 0.88 գ, 11 մմ, 12 ժ., Կ. Վարդանեանի ժողովածոյ: Դիմերես. գրուածիւնից գրեթէ ոչինչ չի երեւում:

II.6. 0.97 գ, 12.5 մմ, 12 ժ., Կ. Վարդանեանի ժողովածոյ: Դիմերես. գլխի հետեւում եւ դէմքի դիմաց երեւում են գրուածեան հետքեր:

II.7. 1.00 գ, 11 մմ, 1 ժ., Կ. Վարդանեանի ժողովածոյ: Դիմերես. գլխի հետեւում գրուածեան թոյլ նշմարուող հետքեր:

II.8. 1.00 գ, 9 մմ, 12 ժ., Կ. Վարդանեանի ժողովածոյ: Դիմերես. գլխի դիմաց գրուածեան թոյլ նշմարուող հետքեր:

II.9. 1.03 գ, 10.6 մմ, 12 ժ., ՀՊԹ 19985/2: Դիմերես. գլխի հետեւում՝ մասամբ, եւ դէմքի դիմաց երեւում է գրուածիւնը:

II.10. 1.09 գ, 11.3 մմ, 2 ժ., ՀՊԹ 19980/8: Դիմերես. գրուածիւնից ոչինչ չի երեւում:

II.11. 1.21 գ, 13 մմ, 12 ժ., Կ. Վարդանեանի ժողովածոյ: Դիմերես. գրուածիւնից գրեթէ ոչինչ չի երեւում:

II.12. 1.43 գ, 11.5 մմ, 12 ժ., Կ. Վարդանեանի ժողովածոյ: Դիմերես. գլխի հետեւում եւ դէմքի դիմաց երեւում է գրուածիւնը:

Մեղու

Դիմերես. Արքայի կիսանդրին դէպի աջ, մօրուքով, երեք կամ աւելի, սրածայր, երբեմն՝ ծուռուծուռ, ելուստներ ունեցող բարձր ու նեղ հայկական թագով: Ծակատային մասում կայ դէպի վեր կորացող «չքոցիկ»: Թագի նեղ ականջակալն ուղղաձիգ իջնում է ցած, իսկ վզկալը, ականջի մօտ վերջինիս հետ անկիւն կազմելով, թեքութեամբ ուղղուած է դէպի թիկունքը: Ապարօշը՝ երկու աննշան գծիկների տես-

քով, երեւում է թագի ստորին մասում, իսկ գլխի հետեւում՝ երբեմն նշմարուած է բարակ գծիկի տեսքով: Թագի վրայ զարդարանք չի երեւում:

Արքայի գլխի դիմաց եւ հետեւում գրուածիւններ:

Դարձերես. Մեղու, որի պատկերը զբաղեցնում է դարձերեսի ամբողջ դաշտը: Գրուածիւններ չկան:

III.1. 0.80 գ, 12.2 մմ, 12 ժ., ՀՊԹ 20003/4: Դիմերես. գրուածիւնից ոչինչ չի երեւում:

III.2. 0.83 գ, 13.1 մմ, 11 ժ., Կ. Վարդանեանի ժողովածոյ: Դիմերես. գլխի հետեւում երեւում են գրուածեան հետքերը:

III.3. 1.08 գ, 12.7 մմ, 1 ժ., Կ. Վարդանեանի ժողովածոյ: Դիմերես. գլխի հետեւում երեւում են գրուածեան հետքեր:

III.4. 1.18 գ, 13.6 մմ, 5 ժ., Կ. Վարդանեանի ժողովածոյ: Դիմերես. գրուածիւնից ոչինչ չի երեւում:

III.5. 1.21 գ, 14.3 մմ, 12 ժ., Կ. Վարդանեանի ժողովածոյ: Դիմերես. գրուածիւնից ոչինչ չի երեւում:

III.6. 1.24 գ, 12.4 մմ, 6 ժ., ՀՊԹ 20003/3: Դիմերես. գրուածիւնից ոչինչ չի երեւում:

III.7. 1.32 գ, 13 մմ, 12 ժ., Կ. Վարդանեանի ժողովածոյ: Դիմերես. գլխի հետեւում երեւում են գրուածեան հետքեր, դէմքի դիմացի գրուածիւնը դուրս է մնացել:

III.8. 1.35 գ, 12.5 մմ, 1 ժ., ՀՊԹ 19980/4: Դիմերես. գլխի հետեւում երեւում են գրուածեան հետքեր:

III.9. 1.40 գ, 12.4 մմ, 12 ժ., Կ. Վարդանեանի ժողովածոյ: Դիմերես. գլխի հետեւում եւ դէմքի դիմաց՝ գրուածեան հետքեր:

III.10. 1.48 գ, 12.4 մմ, 11 ժ., Կ. Վարդանեանի ժողովածոյ: Դիմերես. գլխի հետեւում երեւում են գրուածեան աննշան

հետքեր, գլխի դիմացի գրուածիւնը դուրս է մնացել:

III.11. 1.52 գ, 13.2 մմ, 6 ժ., ՀՊԹ 19985/1: Դիմերես. գրուածեան հետքեր չեն երեւում:

III.12. 1.60 գ, 14 մմ, 12 ժ., Կ. Վարդանեանի ժողովածոյ: Դիմերես. գլխի հետեւում եւ դէմքի դիմաց՝ գրուածեան թոյլ հետքեր:

III.13. 1.61 գ, 12.2 մմ, 1 ժ., Կ. Վարդանեանի ժողովածոյ: Դիմերես. գլխի հետեւում եւ դէմքի դիմաց երեւում են գրուածեան թոյլ հետքեր:

III.14. 1.63 գ, 13.3 մմ, 11 ժ., ՀՊԹ 19992/146: Դիմերես. պատկերը եւ գրուածիւնը գրեթէ չեն պահպանուել:

III.15. 1.84 գ, 13.8 մմ, 11 ժ., Կ. Վարդանեանի ժողովածոյ: Դիմերես. գրուածիւնը երեւում է գլխի հետեւում եւ դէմքի դիմաց:

Այս դրամը եւ դարձերեսին թռչնի պատկերով դրամներից մէկը (II.4) թողարկուած են դիմերեսի նոյն կնիքով:

III.16. 1.93 գ, 14.1 մմ, 12 ժ., ՀՊԹ 20003/2: Դիմերես. երեւում են գրուածեան աննշան հետքեր:

Դիմերես. Նոյնը, բայց արքայի դէմքը դէպի ձախ: Դարձերես. Նոյնը:

III.17. 2.09 գ, 14 մմ, 12 ժ., Կ. Վարդանեանի ժողովածոյ: Դիմերես. գրուածեան հետքեր՝ դէմքի դիմաց եւ գլխի հետեւում:

Կիսադեմ գլուխ

Դիմերես. Արքայի կիսանդրին դէպի ձախ, մօրուքով, Հինգ սրածայր ելուստներ ունեցող բարձր ու նեղ հայկական թագով: Ծակատային մասում կայ դէպի վեր կորացող «չքոցիկ»: Թագի ականջակալն ուղղաձիգ իջնում է ցած, իսկ վզկալը, ականջի մօտ վերջինիս հետ անկիւն կազմելով, որոշ կորութեամբ ուղղուած է դէպի թի-

կուճքը: Թագի վրայ զարդարանք չի երեւում:

Արքայի գլխի դիմաց եւ հետեւում գրուածները:

Դարձերես. Տղամարդու գլուխ՝ մօրուքով կամ անմօրուս (՞), ապարօշով: Մազերը պատկերուած են կոր գծիկներով:

IV.1. 1.09 գ, 9.10 մմ, 1 ժ., Կ. Վարդանեանի ժողովածոյ: Դիմերես. դէմքի դիմաց երեւում են գրուածեան հետքեր:

IV.2. 1.33 գ, 14.1 մմ, 12 ժ., Կ. Վարդանեանի ժողովածոյ: Դիմերես. դէմքի դիմաց եւ գլխի հետեւում երեւում են գրուածեան հետքեր:

IV.3. 1.61 գ, 16.2 մմ, 2 ժ., ՀՊԹ 19992/147: Դիմերես. գրուածեանից ոչինչ չի երեւում:

IV.4. 1.63 գ, 15 մմ, 12 ժ., Կ. Վարդանեանի ժողովածոյ: Դիմերես. գլխի հետեւում՝ MLK', դէմքի դիմաց՝ գրուածեան թոյլ հետքեր:

IV.5. 1.72 գ, 15.2 մմ, 9 ժ., ՀՊԹ 19985/4: Դիմերես. դէմքի դիմաց երեւում են գրուածեան հետքեր:

IV.6. 2.10 գ, 17 մմ, 10 ժ, Ժ. Քրիստիանեանի ժողովածոյ: Դիմերես. գլխի դիմաց՝ համեմատաբար լաւ պահպանուած գրուածեան:

IV.7. 2.20 գ, 17 մմ, 12 ժ., Կ. Վարդանեանի ժողովածոյ:

IV.8. 2.23 գ, 16.7 մմ, 12 ժ., ՀՊԹ 19985/3: Դիմերես. գրուածեանից ոչինչ չի երեւում:

IV.9. 2.34 գ, 15 մմ, 12 ժ., Կ. Վարդանեանի ժողովածոյ: Դիմերես. գրուածեանը թոյլ նշմարուած է դէմքի դիմաց եւ գլխի հետեւում:

IV.10. 2.62 գ, 15.8 մմ, 12 ժ., ՀՊԹ 20003/1: Դիմերես. դէմքի դիմաց երեւում են գրուածեան հետքեր:

IV.11. 2.64 գ, 15 մմ, 10 ժ., Ժ. Քրիստիանեանի ժողովածոյ: Դիմերես. գլխի հետեւում կարդացուած է MLK' բառը:

IV.12. 2.66 գ, 15.1 մմ, 1 ժ., Կ. Վարդանեանի ժողովածոյ: Դիմերես. գրուածեանից գրեթէ ոչինչ չի երեւում:

IV.13. 2.73 գ, 16.4 մմ, 10 ժ., Կ. Վարդանեանի ժողովածոյ: Դիմերես. դէմքի դիմաց եւ գլխի հետեւում՝ համեմատաբար լաւ պահպանուած գրուածեան:

IV.14. 2.90 գ, 17 մմ, 12 ժ., Կ. Վարդանեանի ժողովածոյ:

IV.15. 3.19 գ, 17.1 մմ, 1 ժ., Կ. Վարդանեանի ժողովածոյ: Դիմերես. դէմքի դիմաց երեւում են գրուածեան հետքերը:

IV.16. 3.36 գ, 17.3 մմ, 12 ժ., Կ. Վարդանեանի ժողովածոյ: Դիմերես. գրուածեանից ոչինչ չի երեւում:

IV.17. 3.65 գ, 16 մմ, 12 ժ., Կ. Վարդանեանի ժողովածոյ: Դիմերես. գլխի հետեւում՝ MLK', դէմքի դիմաց գրուածեանը գրեթէ չի երեւում:

IV.18. 3.84 գ, 17 մմ, 12 ժ., Կ. Վարդանեանի ժողովածոյ: Դիմերես. գլխի հետեւում՝ MLK', եւ համեմատաբար լաւ պահպանուած գրուածեան դէմքի դիմաց:

IV.19. 3.95 գ, 17.3 մմ, 12 ժ., ՀՊԹ 19992/145: Դիմերես. գրուածեանից ոչինչ չի երեւում:

IV.20. 4.55 գ, 18 մմ, 12 ժ., Կ. Վարդանեանի ժողովածոյ: Դիմերես. գլխի հետեւում՝ MLK', դէմքի դիմաց՝ 4 կամ 5 տառեր:

Դիմերեսի պատկերատիպերը

Բոլոր խմբերում էլ արքան պատկերուած է մինչեւ ուսը, մօրուքաւոր է եւ կրում է ատամնաւոր հայկական թագ՝ վզկալով եւ ականջակալով: Պատկերազարկան մանրամասներում, սակայն, կան որոշ տարբերութիւններ, որոնց հիման վրայ

կարելի է զանազանել դիմապատկերի երկու տիպ:

Արքայի գլխի դիմքը. Դարձերեսին շան եւ թռչնի պատկերով թողարկումներում արքայի գլուխը պատկերուած է դէպի աջ: Մեղուի պատկերով դրամների գերակշռող մասում արքայի գլուխը նոյնպէս դէպի աջ է: Կայ, սակայն, մի օրինակ, որի վրայ արքան նայում է դէպի ձախ (III.17): Դարձերեսին մարդու կիսադէմ պատկերող թողարկումներում արքայի դէմքն ունի միայն դէպի ձախ ուղղուածութիւն:

Արտաշիսեան դրամների վրայ արքայի գլուխը, որպէս կանոն, պատկերուել է դէմքով դէպի աջ: Մինչ այս խմբի ի յայտ գալը, ունէինք միայն մէկ բացառութիւն՝ Տիգրան անունով արքայի չորս թողարկումներ, որոնցում նա պատկերուած է դէմքով դէպի ձախ: Այդ դրամները, մեր համոզմամբ, կարող են թողարկուած լինել մ.թ.ա. I դ. վերջին երկու-երեք տասնամակներից ոչ շուտ⁴: Ներկայումս ունենք մէկ այլ արքայի եւս երկու թողարկում, որոնցից մէկում դէմքն ուղղուած է դէպի աջ՝ առայժմ յայտնի մէկ բացառութեամբ, որում դէմքը դէպի ձախ է, իսկ միւս թողարկումն ամբողջութեամբ արքային ներկայացնում է դէպի ձախ ուղղուած դէմքով:

Պարթեւական թագաւորութեան եւ նրա ազդեցութեան ոլորտում գտնուող երկրների դրամների վրայ արքայի գլխի այս կամ այն դիրքով պատկերումը (հիմնականում՝ աջ կամ ձախ, երբեմն՝ դիմադարձ պատկերով, որին տրուել է հայեացք), որպէս երեւոյթ, որին տրուել է քաղաքական եւ գաղափարական իմաստ, անցել է որոշակի փոփոխում, երբ, ի վերջոյ, հաստատուել է դէպի ձախ ուղղուած դէմքով դիմապատկերման սկզբունքը⁵: Պարթեւատանում աջ դիրքից ձախին վերջնապէս անցումը տեղի ունեցաւ Միհրդատ II-կան անցումը տեղի ունեցաւ Միհրդատ II-ի օրօք, որին հետեւեցին Պարսքի եւ էլի-ի օրօք, որին հետեւեցին Պարսքի եւ էլի-ի թագաւորները: Հայաստանում մայիսի թագաւորները:

Տիգրան II-ը որդեգրեց սելեւկեան աւանդոյթը՝ իրեն պատկերելով դէպի աջ ուղղուած դէմքով, որը շարունակեցին նրա հետնորդները: Վերոյիշեալ հայկական թողարկումներում դէպի ձախ ուղղուած դիմապատկերները, մեծ հաւանականութեամբ, ակնարկում են այդ արքաների պարթեւական կողմնորոշման մասին:

Արքայի դիմապատկերը. Արքայական այս դիմապատկերների պատկերազարկան եւ ոճական յատկանիշները՝ համեմատած արտաշիսեան միւս արքաների դիմապատկերային առանձնապատկութիւնների հետ, յուշում են դրամների թողարկման հնարաւոր ժամանակը: Տիգրան II-ը եւ Արտաւազդ II-ը դրամների վրայ պատկերուել են անմօրուս: Արտաշէս II-ը հայ արքաներից առաջինն էր, որ մ.թ.ա. 31/0 թ. թողարկած իր պղնձէ դրամի վրայ ներկայացաւ մօրուքով⁶: Տիգրան III-ին վերագրուող դրամների վրայ արքան կրկին անմօրուս է, բացառութեամբ դրախմայի, որտեղ նրա այտի վրայ կարծես թէ մագածածկոյթ կայ⁷: Մօրուքաւոր արքայի դիմապատկերով եւ Տիգրան անունը կրող դրամների մի բաւական մեծ շարք ընդունուած է վերագրել Տիգրան IV-ին⁸: Արտաւազդ III-ը նոյնպէս մօրուքաւոր էր, իսկ Տիգրան V-ը՝ անմօրուս:

Հելլենիստական ժամանակաշրջանի յունա-մակեդոնական արքաները, քիչ բացառութիւններով, եւ Հռոմի ուշ հանրապետական առաջնորդներն ու կայսրերը, մինչեւ Հադրիանոսը, դրամների վրայ պատկերում էին անմօրուս: Տիգրան II-ը եւ նրա որդի Արտաւազդ II-ը հետեւում էին արեւմտեան աւանդոյթին: Պարսքում, հէնց դրամաթողարկման սկզբից՝ մ.թ.ա. III դ. կէսից, արքաները պատկերում էին մօրուքով: Պարթեւատանում Միհրդատ I-ի թագաւորման վերջին տարիներին, իսկ էլիմայիսում եւ Խարակենէում՝ մ.թ.ա. I դ. առաջին կէսին, դրամների արքայական

դիմապատկերներում անցում կատարուեց անմօրուսից մօրուքաւորին:

Քննարկուող դրամական խմբերի արքայական դիմապատկերները գալիս են համալրելու Արտաշէս II-ի, Տիգրան IV-ի, Արտաւազդ III-ի մօրուքաւոր դիմապատկերների շարքը: Մօրուքի առկայութիւնը կամ բացակայութիւնը կարող են դիտարկուել արեւելք-արեւմուտք մշակութային-գաղափարախօսական եւ քաղաքական կոնտեքստում, բայց ոչ ուղղակիօրէն, այլ հաշուի առնելով իւրաքանչիւր կոնկրետ դէպքին վերաբերող մեզ հասանելի տուեալների ամբողջութիւնը⁹:

Վերեւում ակնարկեցինք, որ այս խմբերում կարելի է տարբերակել արքայական դիմապատկերի երկու տիպ: Դրանցից մէկը ներկայացնում են դարձերեսին շան պատկերով դրամները, երկրորդը՝ միւս երեսը խմբերը:

Դիմապատկերի առաջին տիպն առանձնանում է ուղղաձիգ ուրուագծով, որում թագի յետին եզրը վզկալի հետ միասին կազմում է ուղիղ կամ գրեթէ ուղիղ գիծ: Սոյն յատկանիշով, ինչպէս նաեւ թագի ձեւով (ոչ բարձր, գագաթին հինգ պարզորոշ ատամներով) այս տիպը յիշեցնում է Արտաւազդ II-ի որոշ պղինձների, «ձախ Տիգրանի» եւ Արտաշէս II-ի դիմապատկերները: Վերջինիս հետ այն առնչւում է նաեւ արքայի դէմքի մոդելաւորման եղանակով:

Տիգրան III-ի, Տիգրան IV-ի եւ Արտաւազդ III-ի թագերը թողարկումների մեծ մասում պարանոցի վրայ կախուած վզկալից բացի ունեն ուղղաձիգ իջնող ականջակալ՝ ինչպէս Տիգրան Մեծի դրամների վրայ: Սակայն, Տիգրան III-ի եւ Տիգրան IV-ի դրամներում կան օրինակներ, որոնց վրայ թագի վզկալը եւ ականջակալը միմեանցից յստակօրէն չեն բաժանուած¹⁰. կա՛մ վզկալը բացակայում է¹¹, կա՛մ, որը մեզ համար տուեալ պահին ամենահե-

տաքըքիրն է, Տիգրան IV-ին վերագրուած մի շարք թողարկումներում ականջակալը պատկերուած է վզկալի վրայով դէպի ուսը կորացող տեսքով¹²: Աննշան թուացող պատկերագրական այս տարրը կարող է հական դեր խաղալ թողարկման պատկանելութիւնը ճշտելու կամ, առնուազն, թողարկման ժամանակի սահմանները նեղացնելու խնդրում:

Դարձերեսին մեղու, թռչուն եւ կիսադէմ ներկայացնող խմբերում արքայի դիմապատկերն, ընդհանուր գծերով, նոյն տիպի է: Ի տարբերութիւն նախորդ տիպի, արքայի թագն այստեղ բարձր է ու նեղ, ատամները մեծ մասամբ ծուռումուռ են եւ դրանց քանակը յաճախ դժուար է որոշել: Թագի յետին գիծը եւ դէպի մէջքը թեքուող վզկալը անկիւն են կազմում, իսկ նեղ ականջակալը ուղիղ կախուած է: Թագը առջեւի մասում ունի «չքոցիկ» յիշեցնող մի տարր, որի իրականում ինչ լինելը պարզ չէ: Այս խմբերում դիմապատկերները կատարուած են, կարծես, հապճեպ, որոշ դէպքերում՝ բաւական անփոյթ ու անհմուտ: Այն փաստը, որ երկու դրամ, որոնցից մէկը դարձերեսին թռչնի (II.4), միւսը մեղուի (III.15) պատկերով, հատուած են դիմերեսի նոյն կնիքով, հաստատում է, որ այդ երկու խմբերը համաժամանակեայ են կամ սերտօրէն մօտ են միմեանց: Եթէ դիմերեսի այդ կնիքը չեն օգտագործել միաժամանակ ե՛ւ մէկ, ե՛ւ միւս խումբը թողարկելիս, այլ այդ խմբերից մէկը յաջորդել է միւսին, ապա թռչնով դրամը նախորդել է մեղուով դրամին, քանի որ առաջինի վրայ դիմերեսը հատուած է դեռեւս համեմատաբար աւելի լաւ վիճակում գտնուող կնիքով, քան միւսը:

Դարձերեսի պատկերատիպը: Դարձերեսի շան, մեղուի եւ կիսադէմ գլխի պատկերները նորութիւն են Արտաշիսեանների դրամական տիպերի ցանկում: Տիգրան Մեծի պղնձէ թողարկումներում կենդանի-

ներից հանդիպում են ձին եւ փիղը: Արտաւազդ II-ի եւ Արտաշէս II-ի դրամաթողարկման մէջ միայնակ պատկերուած կենդանի դեռեւս յայտնի չէ: Կենդանական պատկերներով դրամներ յատկապէս առատ են թողարկուել Տիգրան III-ի օրօք՝ արծիւ, փիղ, ձի, առիւծի գլուխ: Տիգրան IV-ի դրամների վրայ հանդիպում են արծիւր եւ փիղը, Արտաւազդ III-ի թողարկումներում՝ քարակոյտի վրայ կանգնած արծիւր, Տիգրան IV-ի եւ Էրատոյի դրամների վրայ՝ ձիու առաջամասը: Առեղծուածային է ապարօշ կրող կիսադէմ գլուխը, որը որոշ օրինակներում թւում է, թէ անմօրուս է, միւսներում՝ ակնյայտօրէն մօրուքաւոր է: Տարբերութիւններ կան նաեւ մագերի սանրուածքի պատկերման մէջ:

Չափագիտութիւնը: Բոլոր խմբերի տուեալները յիշատիւ վերցրած՝ դրամների կշիռները բաշխւում են 0.80-ից 4.55 գ եւ 10-18մմ ընդգրկոյթում, սակայն առանձին-առանձին դիտարկելիս խմբերի միջեւ կան կշռային ու չափային որոշակի տարբերութիւններ: Ամենաթեթեւը դարձերեսին թռչնի պատկերով դրամներն են՝ 0.80-ից 1.43 գ, 0.9 գ միջին քաշով: Դարձերեսին շան պատկերով դրամները կշռում են 0.91-ից 1.75 գ, 1.30 գ միջին քաշով¹³: Վերջինիս իր կշռային տուեալներով բաւական մօտ է դարձերեսին մեղուի պատկերով դրամների խումբը՝ 0.83-ից 1.93 գ, 1.41 գ (1.45 գ) միջին կշռով¹⁴: Ամենածանրը դարձերեսին կիսադէմով դրամներն են՝ 1.33-ից 4.55 գ, միջին քաշը՝ 2.69 գ¹⁵:

Կշիռը	Մինչեւ 1 գ	1-2 գ	2-3 գ	3-4 գ	4-ից ավելի
Թռչուն	6	6			
Շուն	2	13			
Մեղու	2	15	1		
Կիսադէմ		5	9	5	1

Թէեւ թռչուն խմբի 12 դրամներից 6-ը ընկել են 1-2 գրամի գօտում, սակայն դրանցից 4-ը կշռում են 1-1.09 գ, այսինքն՝ մօտ են նուազագոյն կշիռներին: Շուն եւ մեղու խմբերում մեծամասնութիւն են կազմում 1-2 գ կշռով դրամները, կիսադէմով խմբում՝ 2-4 գրամանոց դրամները:

Թռչուն եւ շուն խմբերում դրամների մեծ մասի տրամագիծը մօտաւորապէս 11-12 մմ է: Մեղու խմբի դրամները, թէեւ իրենց կշռային տուեալներով մօտ են շուն խմբի դրամներին, բայց հատաճոյլներն աւելի բարակ են եւ չափերով մի քիչ աւելի մեծ են՝ 12-14 մմ: Կիսադէմով խմբում գերակշռում են 15-17 մմ դրամները:

Այս տուեալները մեզ հիմք են տալիս եզրակացնելու, որ գործ ունենք երեք տարբեր արժէչափի թողարկումների հետ. փոքր՝ թռչուն, միջին՝ շուն եւ մեղու, եւ մեծ՝ կիսադէմ: Չի բացառոււմ, սակայն, որ չափագիտական այդ տարբերութիւնները կարող են բացատրուել պղնձէ դրամների թողարկման մէջ ոչ խիստ կանոնների գոյութեամբ, երբ միեւնոյն արժէչափի դրամները ունենում էին մի քանի գրամի եւ մի քանի միլիմետրի հասնող կշռային ու չափային տարբերութիւններ:

Տրամագիծը	9	10	11	12	13	14	15	16	17	18մմ
Թռչուն	1	2	5	3	1					
Շուն		2	9	4						
Մեղու				7	6	4				
Կիսադէմ						1	6	4	7	1

Եթէ Հաշուի չառնենք Տիգրան Մեծի պղնձէ դրամների չափազիտական տուեալները, քանի որ քննուող դրամները ոչ մի կերպ չեն առնչուում այս արքայի եւ նրա ժամանակաշրջանի հետ, ապա կարող ենք փաստել, որ նրան յաջորդած Արտաւազդ II-ը այսպիսի թեթեւ քաշի պղնձէ դրամներ չի թողարկել. դարձերեսի նիկէ եւ նոճի տիպերով պղնձէ երկու սերիաների համար էլ դրամների կշիռը տատանուում է 3-ից 8 գրամի սահմաններում¹⁶: Տիգրան Մեծից յետոյ քննարկուող դրամների պէս փոքր կշռի պղնձադրամ դարձերեսին խաղողի ողկոյց¹⁷, առաջին անգամ թողարկել է Արտաշէս II-ը: Տիգրան III-ի պղինձները նոյնպէս հիմնականում տատանուում են 2.5-3-ից 7.5-8 գրամի սահմաններում: Տիգրան IV-ի դրամաթողարկման մէջ շարունակուում է պահպանուել Արտաւազդ II-ի եւ Տիգրան III-ի կշռային ընդհանրութիւնը, թէեւ նկատելի է նուազ կշիռ ունեցող դրամների քանակի աւելացում վերոյիշեալ սահմաններում: Միեւնոյն ժամանակ, Տիգրան IV-ի թողարկուածներում աւելի շատ են թէ՛ տիպերի տեսակներով եւ թէ՛ քանակով, այն դրամները, որոնց կշիռը տատանուում է մօտաւորապէս 1.1-1.5-ից 2.5 գրամի, իսկ հատաձոյլի տրամագիծը՝ 11-15 մմ սահմաններում: Արտաւազդ III-ի, Տիգրան IV-ի եւ էրատոյի դրամները կրկին միայն ծանր կշռի են՝ 3.5-4-ից 6.5 գ: Գրեթէ նոյնն է՝ 3-ից 6 գրամ, «ձախ Տիգրանի» դրամների կշիռը: Չափազիտական այս էքսկուրսը եւս մի կողմնակի փաստարկ է ընձեռուում դրամը մ.թ.ա. վերջին երեք տասնամեակների սահմաններում տեղադրելու օգտին: Այսպիսով, Տիգրան Մեծից բացի, Արտաշէս II-ը, Տիգրան III-ը եւ Տիգրան IV-ը այն արքաներն են, որոնք թողարկել են կամ, աւելի ճշգրիտ լինելու համար՝ որոնցից մեզ են հասել, փոքր կշռի դրամներ:

Գրութիւնները

Հասանք թերեւս ամենակարեւոր եւ ամենաբարդ խնդրին՝ գրութիւնների վերծանմանը: Նախ յիշեցնենք, որ խմբերից մէկում գրութիւնը գտնուում է դրամի դարձերեսին՝ շան շուրջը, միւսներում այն տեղադրուած է դիմերեսի վրայ՝ արքայի դէմքի դիմաց եւ գլխի հետեւում: Ինչպէս տեսնում ենք, առաջին եւ միւս երեք խմբերը միմեանցից զատուում են ոչ միայն արքայի դիմապատկերային առանձնատիպերով, այլեւ՝ գրութեան տեղադրութեամբ:

Մեզ յայտնի օրինակներում չկայ որեւէ մէկը, որի վրայ գրութիւնը պահպանուած լինի ամբողջութեամբ: Ցաւօք, եղած նմուշները թոյլ չեն տալիս նաեւ վստահօրէն վերականգնել ամբողջ գրութիւնը՝ դրամները համադրելու եւ միմեանց լրացնելու ճանապարհով: Տառերն աւելի յստակ են երեւում շան պատկերով դրամների վրայ, մինչդեռ միւս խմբերում գրութիւնները բաւական անփոյթ են փորագրուած կնիքի վրայ, իսկ դրամները հատուել են ոչ բաւարար խնամքով, որոնց գումարուում է նաեւ դրամների վատ պահպանուածութիւնը:

Նախքան գրութիւնների վերծանման փորձին անցնելը, հարց տանք մեզ. ի՞նչ լեզուով կամ, աւելի ճիշտ, ի՞նչ այբուբենի տառերով են գրուած՝ արամէական, թէ՞ յունական: Հարցը կարող է տարօրինակ թուալ, քանի որ այս այբուբեններին քիչ թէ շատ ծանօթ մէկը չի դժուարանայ դրանք տարբերել: Կը փորձենք ցոյց տալ, սակայն, որ գործ ունենք աւելի խրթին դէպքի հետ, քան կարելի էր սպասել: Նախ ասենք, որ Արտաշիսեաններն իրենց դրամների վրայ գրել էին տալիս յունարէն: Գրութիւնները, սովորաբար, լաւ ընթեռնելի են, թէեւ կան տառաձեւերի աղաւաղման առանձին դէպքեր: Քննարկուող դրամների գրութիւնները, կարծես, կաս-

կած չեն թողնում, որ գրուած են արամէական այբուբենով: Այստեղ, սակայն, մենք կ'առաջարկենք ընթերցման երկընտրանքային երկու տարբերակ, քանի որ առկայ նիւթը, մեր կարծիքով, անվիճելի եզրայանգման հնարաւորութիւն չի ընձեռնում:

Առաջին տարբերակ

Այն վստահութիւնը, որ գրութիւններն արամէատառ են, ամրապնդուում է մի քանի օրինակների վրայ յստակ կարդացուող MLK՝ – «արքայ» բառով: Շան պատկերով դրամների վրայ այն տեղադրուած է դարձերեսին՝ վերեւում (I.3, I.6, I.13, I.16), միւս խմբերում՝ դիմերեսին՝ արքայի գլխի հետեւում (II.4, IV.4, IV.13, IV.18, IV.20): Ուստի, շան պատկերով դրամների դարձերեսին՝ ներքեւում, իսկ միւս խմբերում արքայի դէմքի դիմաց գրուած բառը պէտք է, որ արքայի անունը լինի:

Շան պատկերով դրամներում MLK՝ բառի տառերն ուղղուած են դէպի դուրս, միւս խմբերում՝ դէպի ներս (տե՛ս խոշորացուած լուսանկարները): Շուն խմբում արքայի անունն տառերը չունեն յստակ եւ միարժէք ձեւեր, որպէսզի առանց վարանման հնարաւոր լինէր պարզել գրութեան ընթերցման ուղղութիւնը՝ դրամն ուղիղ բռնած, թէ՞ 180 աստիճան շրջած դիրքում: Բացի գուտ տրամաբանութիւնից, որն աւելի հաւանական է գտնուում դրամն ուղիղ դիրքում բռնած եւ բառը դաշտի աջ կողմից ընթերցելու տարբերակը, տեխնիկական մի առանձնայատկութիւն եւս, կարելի է հաստ են եւ ուռուցիկ, իսկ ներքեւում սրածայր են: Արամէերէն տառերի գրելաձեւին բնորոշ այս «սեպաձեւութիւնը» կարող է բացատրուել նրանով, որ գրելիս փորագրիչը ձեռքը շարժում էր վերից վար ուղղութեամբ եւ, սկզբում ձեռքի

աւելի ուժեղ ճնշման հետեւանքով, իւրաքանչիւր գծիկի սկիզբը մի քիչ աւելի խոր ու լայն էր փորագրուում, իսկ վերջը՝ աւելի մակերեսային ու սրածայր՝ ստանալով այնպիսի տեսք, ինչպիսին լինում են ճեղքուած ծայր ունեցող թանաքէ գրչով գրուած տառերը: Տառերի «սեպաձեւութեան» բազմաթիւ օրինակներ կարելի է գտնել Պարսքի, էլիմայիսի եւ արամէատառ գրութեամբ այլ դրամներէ¹⁸, ինչպէս նաեւ արտաշատեան բուլլաների գրութիւններում¹⁹: Ելնելով այս առանձնատիպերով մենք պէտք է ընդունենք, որ դրամի ներքեւի մասում տեղադրուած բառի տառերն իրենց գլխիկներով ուղղուած են դէպի ներս, քանի որ շան անմիջապէս տակ գտնուող երկու տառերի ուղղաձիգ գծիկների սրածայր մասերն ուղղուած են դէպի դուրս: Այսինքն՝ թէ՛ MLK՝ եւ թէ՛ ներքեւի բառը գրելիս փորագրիչը կնիքի դիրքը չի փոխել:

Աջից առաջին տառը երեւում է երեք դրամի վրայ (I.5, I.7, I.10) եւ, թւում է՝ խաչաձեւ տեսք ունի: Երկրորդ տառը, ցաւօք, ոչ մի օրինակի վրայ ամբողջովին չի երեւում: Յաջորդ տառը կազմուած է ուղղաձիգ գծիկից եւ աջից նրան միացող գրեթէ հորիզոնական գծիկից²⁰: Միւս տառը բաղկացած է ուղղաձիգ գծիկից եւ ձախ կողմում կէսից քիչ վեր նրան միացող Դ-աձեւ մասնիկից՝ Դ²¹: Նախավերջին տառն ունի Կ տեսքը: Վերջին երեւացող տառից՝ շան պոչի մօտ, հաւանաբար միայն մի հատուածն է երեւում (I.4, I.6, I.16) եւ ունի կիսաշրջանաձեւ տեսք: Առկայ նմուշներում, փաստօրէն, տառերից միայն երեքն են յստակ երեւում՝ ԿՂԻ, իսկ բառն ամբողջութեամբ կարող է այսպիսի տեսք ունենալ՝ ԿՂԻ Կ՝:

Յայտնի է, որ պարթեւական դարաշրջանի ընթացքում նախկինում Աքեմենեաններին հպատակ մի շարք արեւելեան ժողովուրդներ ստեղծեցին արամէերէն

գրութեան վրայ հիմնուած տեղական այբուբեններ: Որոշակի ընդհանրութեամբ հանդերձ, դրանց որոշ տառաձեւեր միմեանցից խիստ տարբերուում են: Նոյն ուրուագիծն ունեցող տառանիշը տարբեր այբուբեններում կարող է գործածուել տարբեր նշանակութեամբ: Աւելին, նոյն հնչիւնը տեղական նոյն այբուբենում կարող է ունենալ գրութեան միանգամայն տարբեր ձեւեր՝ ոչ միայն ժամանակագրական առումով (վաղ ձեւեր, ուշ ձեւեր), այլեւ՝ միեւնոյն ժամանակի տարբեր տեքստերում եւ, անգամ, նոյն տեքստի մէջ: Սրա հետ մէկտեղ, նոյնիսկ «դասական» արամէներէնի մի քանի տառեր (դալեթ, կաֆ, ռեշ) միմեանց այնքան նման են, որ դրանք կարելի է տարբերակել միայն որոշակի կոնտեքստում, իսկ երբեմն էլ այդ նմանութիւնը տարբերութեամբների պատճառ է դառնում: Եթէ ասուածին աւելացնենք գրութիւններում երբեմն հանդիպող անփութութիւնը, սխալները եւ թերի պահպանութեամբները, ինչպէս տուեալ դէպքում է, ապա արամէներէն գրութիւնների ընթացումը ոչ քիչ դժգոհեցնում նմանուում է ռեբուսի²²:

Այս կապակցութեամբ կազմեցինք Հայաստանում յայտնաբերուած արամէներէն գրութիւնների տառաձեւերի, ինչպէս նաեւ՝ իրանական ու սեմական աշխարհի երկրների դրամական գրութիւնների տառաձեւերի համեմատական աղիւսակներ (տե՛ս աղ. 4 եւ 5)՝ ենթադրելով, որ դրանք կարող են մեզ կողմնորոշել գրութիւնն ընթացելու խնդրում:

Շատ կարեւոր է բառի առաջին տառի ճիշտ վերծանումը եւ տառերի քանակը, ինչը կարող է օգնել, ի նկատի ունենալով Արտաշիսեան արքաների անունները՝ Արտաշէս, Տիգրան, Արտաւազդ (a priori ենթադրելով, որ այս դրամի վրայ ունենք սրանցից որեւէ մէկը), կողմնորոշուելու միւս տառերի վերծանման հարցում: Առա-

ջին խաչաձեւ տառը հանդիպում ենք Պարսքի դրամների գրութիւններում՝ բազմապիսի արեֆուերի շարքում (աղ. 5, Պարսք): Արամէներէն գրութիւններում այդպիսի տեսքով հանդէս եկող միւս տառը մեմն է (աղ. 5, Պարթեւստան, Սողդիանա, էլիմայիս): MLK['] բառում, սակայն, մենք ունենք կանոնաւոր մեմ: Ուստի հաւանական է, որ արքայի անուան սկզբնատառը մեմ-ը չէ, այլ արեֆ-ը: Այս վերծանումը կը հեշտանար, եթէ ամբողջութեամբ երեւար MLK'-ի արեֆ-ը, որը, ցաւօք, շան պատկերով դրամների առկայ օրինակների վրայ հատածոյլից դուրս է մնացել կամ երեւում է մասամբ: Դարձերեսին գլխի պատկերով խմբում MLK' բառում ունենք արեֆ-ի այն տարբերակը, որը հանդիպում է Արտաշէսի սահմանաքարերի վրայ (աղ. 4): Ի դէպ, Ծակքարի եւ Սպիտակի արձանագրութիւններում արեֆ-ը երկու ձեւով է հանդէս գալիս: Այսպիսի արեֆ հանդիպում ենք նաեւ Սողդիանայի դրամների գրութիւններում (աղ. 5):

Երկրորդ տառը, եթէ այն ունի Վ տեսքը, հանդիպում է Թեղուտում յայտնաբերուած Արտաշէսի սահմանաքարերում՝ նշանակելով Ռե եւ Ռեշ տառերը (աղ. 4):

Մնացած տառերի համար ուղղակի զուգահեռներ չգտանք: Այդուհանդերձ, շան ետեւի աջ ոտքի տակ տեղադրուած տառը որոշ չափով նման է խեթ-ին, մասնաւորապէս՝ Իշխանասարում յայտնաբերուած Արտաշէսի սահմանաքարի խեթ-ի երկու տարբերակներից մէկին եւ Սիսիանի դամբարանում յայտնաբերուած թասի գրութեան մէջ վկայուած խեթ-ին (աղ. 4):

Թէեւ այս դիտարկումները հիմք չեն տալիս գրութիւնը վստահօրէն վերծանելու, սակայն որոշակի տուեալներ են ընձեռում ընթացման վարկած առաջադրելու համար: Այսպիսով, նկատի ունենալով երկու-երեք տառերի վերը յիշատակուած մեկնաբանութիւնները՝ հնարաւոր ենք հա-

մարում բառն ընթերցել որպէս յԿՂԻ ԻԻ (ԴԷ ԻԻԿԿ), 'rthšs, Արտաշէս:

Արտաշէս անունը Հայաստանում յայտնաբերուած արամէներէն սահմանաքարերում հանդիպում է գրութեան հետեւեալ տարբերակներով՝

- ԴԷ ԻԻԿԿ ²³ 'rthšsy - Կարմիր, չ. 98 40²³:
- ԴԷ ԻԻԿԿ ²⁴ ['r]thšsy - Կոնուտ²⁴:
- ԻԷ ԻԻԿԿ ²⁵ ['r]thš[sy] - Իշխանասար²⁵:
- ԿԿ ԿԿ ԻԻԿԿ ²⁶ 'rthšsy MLK - Ծակքար, չ. 98 2005²⁶:
- ԿԿ ԿԿ ԻԻԿԿ ²⁷ 'rtrksšsy MLK' - Թեղուտ 127:
- ԿԿ ԿԿ ԻԻԿԿ ²⁸ 'rtrksrksš - Թեղուտ 228:
- ԿԿ ԿԿ ԻԻԿԿ ²⁹ 'rthšs - Սպիտակ²⁹:

Կարելի է նկատել, որ սահմանաքարերի վրայ փորագրուած Արտաշէս անունը, բացառութեամբ Թեղուտի օրինակների, որոշ նմանութիւն ունի խնդրոյ առարկայ դրամների գրութեան հետ, բայց տառատեսակների տարբերութիւններն, այնուամենայնիւ, մեծ են: Կարելի է առաջարկել այդ տարբերութիւնների բացատրութեան հետեւեալ տարբերակները. 1) դրամների վրայ ունենք ժամանակի ընթացքում փոփոխութիւններ կրած եւ, այսպէս ասած, «հայկականացած» արամէներէն գրեր, 2) «հայկականացած» արամէներէն գրեր, 3) տառերի աղաւաղումը կնիքի փորագրիչի տառերի գործն է: Այդպիսի դէպքերը բացառութիւն չեն արամէստառ դրամական գրութիւններում: Որպէս ցայտուն օրինակ, որն առնչուում է նաեւ Արտաշէս անուան որն առնչուում է նաեւ Արտաշէս անուան հետ՝ ստորեւ ներկայացնում ենք Արտաշէսի (Արտաքսերքսէս) անունը կրող Պարս-

քի երեք արքաների դրամների գրութեան նմուշներ՝

- ՆԿԿԿԻԿԿ ³⁰ 'rthštry - Արդախշիր I:
- ՆԿԿԿԻԿԿ ³¹ 'rthštry - Արդախշիր I:
- ՆԿԿԿԻԿԿ ³² 'rthštr MLK' - Արդախշիր II:
- ՆԿԿԿԻԿԿ ³³ 'rthštr MLK' - Արդախշիր II:
- ՆԿԿԿԻԿԿ ³⁴ 'rthšt MLK' - Արդախշիր II:
- ՆԿԿԿԻԿԿ ³⁵ 'rthštr MLK - Արդախշիր II:
- ՆԿԿԿԻԿԿ ³⁶ 'rthštr MLK - Արդախշիր II:
- ՆԿԿԿԻԿԿ ³⁷ 'rthštry MLK' - Արդախշիր III:

Այս օրինակներում կարելի է նկատել, թէ միեւնոյն տառերը գրութեան որքան տարբեր ձեւերով են հանդէս գալիս անգամ նոյն արքայի դրամներում, եւ թէ տառերն ինչպիսի փոփոխութիւնների են ենթարկուել Արդախշիր I-ից մինչեւ Արդախշիր III-ը ընկած երկարատեւ ժամանակահատուածում՝ մ.թ.ա III դ. երկրորդ կէսից - մ.թ. II դ. առաջին կէս:

Մեր կարծիքով՝ տառերի իւրայատկութեան մէջ, այս դէպքում, որոշիչ կարող է համարուել առաջին գործօնը՝ «հայկականացած» արամէներէն այբուբենը, որն, իր հերթին, կարող էր կրել նաեւ փորագրիչի ձեւագրի ազդեցութիւնը:

Այսպիսով, դարձերեսին շան պատկերով դրամների գրութեան վերծանման մեր առաջին տարբերակն է՝ MLK' 'rthšs, «Արտաշէս արքայ»: Միւս խմբերում արքայի անուան ընթեռնելի հատուածները թոյլ են տալիս եզրակացնել, որ դրանք եւս կրում են նոյն գրութիւնը՝ «ձեւագրային» որոշ տարբերութիւններով:

Անթերցման երկրորդ տարբերակ.

Այս տարբերակը կարող է պարագոք- սալ թուալ, բայց այն անհիմն է. յամե- նայն դէպս, արժանի է յիշատակուելու որ- պէս մէկ այլ վարկած:

Ճրանսիայի Ազգային գրադարանի մեղալնների կաբինետի Հայկական դրամնե- րի հաւաքածոյի մէջ կայ մի պղնձէ դրամ³⁰, որի դիմերեսին պատկերուած ար- քան պատկերագրական եւ ոճական ա- ուանձնայատկութիւններով հեռու է քննարկուող դրամների վրայ ներկայա- ցուած արքայի դիմապատկերից³¹: Դրամի դարձերեսին թուռն է՝ դէպի ձախ կանգ- նած, աջ թեւով արմաւենու ճիւղ բռնած: Թռչնի ձախ եւ աջ կողմում յունարէն ա- դաւաղուած, բայց ընթեռնելի գրութիւն կայ³²: Ձախից ընթերցուած է [M]EΓA- ΛOY, իսկ աջից՝ [T]IΓPA[NOY] բառերը: Քննարկուող նիւթի տեսանկիւնից հե- տաքրքիրն այստեղ Տիգրան անուան գրութեան տեսքն է (աղ. 2, BNL, մեծա- ցուած լուսանկար), որը գարմանալիօրէն յիշեցնում է դարձերեսին շան պատկերով դրամների վրայ արքայի անուան գրու- թիւնը: Մասնաւորապէս, ուշագրաւ է գա- մա եւ ոտ տառերի միակցուած տեսքը, նրանց յաջորդող, առանց հորիզոնական գծիկի ալֆան: Օմիկրոն-ը գրուած է մահի- կաձեւ սիգմա-յի նման, իսկ Տիգրան բա- ուում, բացի տառերի վերոյիշեալ առանձ- նայատկութիւններից, ալֆա-յից յետոյ մինչեւ ճիւղը, երեք գծիկներից բաղկացած անհասկանալի նշան է, որտեղ պէտք է որ Գիւ տառը լիներ: ՕՄ վերջաւորութիւնը չկայ կամ, գրուած լինելով ճիւղից յետոյ, չի տեղաւորուել հատածոյլի վրայ:

Ընթերցողը, ասուածից ենթադրելով, թէ ինչ ուղղութեամբ են ընթանալու մեր հետագայ դատողութիւնները՝ կարող է ա- ուարկել՝ մատնացոյց անելով դրամների վրայ անվերապահօրէն ընթերցողը արա- մէներէն MLK՝ բառը: Սակայն, անտիկ աշ-

խարհում՝ երկլեզու դրամներ թողարկուել են: Մեզ վերաբերող տարածաշրջանում կարելի է յիշատակել մ.թ.ա. III դ. երկրորդ կէսում Պարթեւական թագաւորութեան հիմնադիր Արշակ I-ի թողարկած դրամնե- րը՝ արամէներէն եւ յունարէն գրութիւն- ներով³³: Գրեթէ երեքդարեայ ընդմիջումից յետոյ, որի ընթացքում պարթեւական դրամների գրութիւնները միմիայն յունա- րէն էին, մ.թ. 70-ական թթ. դրամանների վրայ վերստին յայտնուած են արամէներէն գրութիւնները՝ սկզբում արքայի անուան երկու սկզբնատառերի ձեւով (Sell. Type 71), իսկ 140 թուականից՝ արքայի անու- անը+MLK՝ բանաձեւի տեսքով (Sell. Type 82):

Ուշագրաւ է, որ Արշակ I-ի դրամների վրայ ΑΡΣΑΚΟΥ բառը գրուած է գեղեցիկ ու յստակ յունարէն «ձեռագրով», իսկ ար- ամէներէն քառանիշ բառը երկու թողար- կումներում գրութեան որոշակի տարբե- րութեամբ է հանդէս գալիս³⁴: Մ.թ. II դ. պարթեւական դրամանների վրայ արա- մէներէն ընդմիջարկութիւնը դարձերեսի գրութեան մէջ արուած էր ընթեռնելի տա- ուերով, մինչդեռ յունարէն, աւելի մեծ հա- տուածն այլեւս ընթեռնելի չէր՝ պարզա- պէս յունարէն գրութեան ձեւական նմա- նակում էր: Կարելի է, ուստի, եզրակացնել, որ առաջին դէպքում արամէներէն բառը փորագրուել է այդ լեզուում անվարժ յոյն վարպետի կողմից, իսկ մ.թ. II դարի դրամ- անների կնիքները պատրաստած պարթեւ փորագրիչների համար յունարէն այբու- բենն արդէն անծանօթ էր:

Դրամի գրութիւնն ունէր իրաւական գործառոյթ. օրինակ, ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑ- ΝΟΥ Տիգրան արքայի (դրամ), սեռական հոլովով գրութիւնը ցոյց է տալիս, թէ ում է պատկանում դրամը, ում կողմից է թո- դարկուած, ով է պաշտպանում դրա օրի- նական շրջանառութիւնը: Սակայն, մ.թ.ա. I դ. վերջին երկու տասնամեակներում թո- դարկուած արտաշեսեան պղինձների մի

զգալի մասի գրութիւնների համար աւելի յարմար է օգտագործել ոչ թէ ընթերցել, այլ վերծանել բառը, քանի որ շատ դէպքե- րում գրութեան մեծ մասը դուրս է մնացել հատածոյլից, կան խեղուած տառեր ու սխալներ: Գրութեան հիմնական գործա- ուոյթը, թէեւ ոչ ամբողջովին, բայց զգա- լիօրէն կորցրել էր իր դերը ու ձեռք էր բե- րել, աւելի շուտ, ծիսական-ձեւական բնոյթ, իսկ դրա փոխարէն աւելի էր աճել պատկերային մասի նշանակութիւնը, որն այժմ աւելի մեծ տարածք էր զբաղեցնում դարձերեսի դաշտում: Զիշտ է, կնիքի վրայ արքայի տիրոջանունն ու անունը փորա- գրուած էին, բայց հատուած դրամի վրայ դրանք միայն մասամբ էին տեղաւորուած, իսկ առանձին բառեր լրիւ դուրս էին մնում: Գրութիւնը ոչ այնքան կար, որ- քան ենթադրուած էր նրա ամբողջական գոյութիւնը: Ի դէպ, նոյն գործընթացը կարելի է նկատել նաեւ պարթեւական պղնձէ դրամների գրութիւններում, ինչն սկզբից երկար գրութիւններն առհասարակ վերացան պղնձէ դրամների վրայից³⁵: Հայկական եւ պարթեւական պղինձների նկատմամբ մ.թ.ա. I դ. վեր- ջին երկու տասնամեակներին ի յայտ եկած միասին, այնուամենայնիւ, պահպանում էր դարձերեսի ձեւաւորման այդ աւանդա- կան տարրը՝ այլեւս չունենալով նախկին կարեւորութիւնը: Հայաստանում այս մի- տումն ընդհատուեց Տիգրան IV-ի եւ էրա- տոյի, Տիգրան V-ի եւ Օգոստոսի դիմա- պատկերներով պղնձէ դրամների թողարկ- ւմամբ, որոնք դրամի երկու կողմում ու- նէին լաւ ընթեռնելի յունարէն շրջանաձեւ գրութիւններ: Բայց դրանք, այլեւս, Ար- տաշեսեանների վերջին թողարկումները եղան:

Վերադառնալով ինդոյ առարկայ դրամներին՝ յիշեցնենք, որ շան պատկերով դրամների վրայ գրութիւնը տեղադրուած

է դարձերեսին՝ ինչպէս ընդունուած էր առհասարակ հելլենիստական եւ, տուեալ դէպքում, արտաշեսեան դրամաթողարկ- ման մէջ: Մինչդեռ միւս երեք խմբերում նկատուած ենք արտաշեսեան դրամաթո- դարկմանը ոչ բնորոշ երեւոյթ. գրութիւնը տեղադրուած է ոչ թէ դարձերեսին, այլ դիմերեսին՝ արքայի դիմապատկերի ձախ եւ աջ կողմում: Սա եւս ցոյց է տալիս, որ այս դրամները սովորական, կանոնաւոր թողարկումներ չեն, այլ ի յայտ են եկել պատմական ինչ-որ արտակարգ հանգա- մանքներում:

Հէնց նոր քննարկուած միտումների կոնտեքստը, մասնաւորապէս՝ մ.թ.ա I դ. վերջին դրամների գրութիւնների նկատ- մամբ դրամաթողարկման պատուիրատուի եւ դրամաթողարկումն իրագործողների ցուցաբերած նկատելի անտարբերութիւնը, թոյլ է տալիս առաջ քաշել հետեւեալ վար- կածը: Թէեւ արամէներէն MLK՝ բառը մի քանի օրինակների վրայ ընթերցուած է վստահօրէն, բայց նոյնը չի կարելի ասել միւս բառի մասին, որը տառերի տեսքով ու ոճով նոյնպէս նման է արամէական գրութեան: MLK՝ բառի առկայութեամբ, տրամաբանական է ենթադրել, որ արքայի անունը նոյնպէս պէտք է գրուած լինէր ար- ամէներէն: Յայտնի է, սակայն, որ պար- թեւները կիրառել են, այսպէս կոչուած, հետերոգրաֆիկ գիրը (այլագիր), ինչն ա- ուտօրէն վկայուած է Նիսայում յայտնա- բերուած կաւէ անօթների բեկորների վրայ գրուած տեքստերում: Այդ տեքստերը, գրուած լինելով արամէներէն տառերով, ու- նեն բառերի եւ արտայայտութիւնների այնպիսի կաղապարուած ձեւեր, որոնք անյարիր են արամէներէնի քերականութեա- նը եւ, իրականում, պարթեւներէն ընթեր- ցողը արամէական այլագրութիւններ են: Այս փաստաթղթերը ներկայացնում են ա- քեմենեան դիւանատան արամէներէն լե- զուից արամէական այլագրերի (հետերո- գրամա) կիրառմամբ իրաներէն գրու-

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 Մ'էկ բացատրութեամբ՝ տե՛ս III.17:

2 Հայաստանում հնագիտական ժառանգութեան պահպանման գործում պատասխանատու կազմակերպութիւնների հետեւողականութիւնը եւ անհատների կողմից դրա գիտակցումը դեռեւս հեռու է բաւարար լինելուց: Կայ օրէնքի կատարելագործման անհրաժեշտութիւն: Յատուկ ջանքեր են պէտք, որպէսզի հանրութիւնը տեղեկացուած լինի եւ գիտակցի տարեցտարի անհետացող, անվերականգնելի հնագիտական ժառանգութեան պահպանման կարեւորութիւնը: Օրինակելի են, մասնատրապէս, Դանիայի եւ Անգլիայի օրէնսդրութիւնները, օրէնսդիրների, իրաւապահների, գիտնականների եւ շարքային քաղաքացիների միջեւ այդ երկրներում հաստատուած համագործակցութիւնը, տե՛ս, **A. Burnett**, *The Scheme for Recording Portable Antiquities in Britain: Progress Report*, International Numismatic Commission Compte rendu 49 (2000), pp. 19-26, **J. C. Moesgaard**, *The Law and Practice Concerning Coin Finds in Denmark*, International Numismatic Commission Compte rendu 49 (2000), pp. 27-33, ինչպէս նաեւ՝ **Ռ. Վարդանեան**, *Հնագիտական ժառանգութիւնը՝ ազգային հարստութիւն*, «Օրէնք եւ իրականութիւն», 7 (2002), էջ 29-31:

3 Պատկերագրական մանրամասների տեսանկյունից, կարելի է, թերեւս, առանձնացնել ՀՊԹ 1987/59 դրամը, որտեղ արքայի թագը, թում է՝ պատկերուած է միաձոյլ վզկալ-ականջակալով, որը ներքեւի մասում երկատուս է՝ աղեղ կազմելով: Քիչ այլ կերպ է մշակուած նաեւ արքայի մօրուքը:

4 **Р. Е. Варданян**, *К вопросу о датировке двух групп армянских монет эллинистической эпохи*, ՊԲՀ, թիւ 2 (1978), էջ 195-201:

5 **Р. Е. Варданян**, *Ариакидский поворот*, «Вестник древней истории», 4, (1992), с. 106-115; **R. Vardanyan**, *Zur Deutung des Königsprofils auf parthischen Münzen*, - "Archäologische Mitteilungen aus Iran und Turan", Band 32 (2000), pp. 254-259.

6 **Ռ. Վարդանեան**, *Արտաշէս II-ի տարեթուակիր պղնձէ դրամը՝ Արտաշատում պոմպէլուեան տոմարի կիրառման եւս մի վկայութիւն*, «Հանդէս ամսօրեայ», 1-12 (2000), էջ 119-134:

7 **P. Z. Bedoukian**, *Coinage of the Artaxiads of Armenia*, London, 1978, Pl. 6, no. 137. միւս դէպքերի մասին՝ **P. Z. Bedoukian**, *Coinage...*, nos. 139, 141; **Y. T. Necessian**, *Armenian Coins and Their Values*, Los Angeles, 1995, Pl. 11, no. 138, Pl. 12, no. 152, դժուար է որոշակի կարծիք յայտնել:

8 **P. Z. Bedoukian**, *Coinage of the Artaxiads of Armenia*, London, 1978, Pl. 7, nos 148-151, 153-158.

9 **Р. Варданян**, *Ариакидский поворот...*; **R. Vardanyan**, *Zur Deutung des Königsprofils...*

10 Տիգրան III՝ **Y. T. Necessian**, *Armenian Coins and Their Values*, Los Angeles, 1995, nos. 144, 149; Classical Numismatic Group, Auction 36 (1996), no 620.

11 Տիգրան III՝ **Y. T. Necessian**, *Armenian Coins...*, no. 150.

12 **Y. T. Necessian**, *Armenian Coins...*, nos. 158, 160; Classical Numismatic Group, Auction 36 (1996), nos. 625, 626, 629, 630.

13 I.1 կտորուած դրամի կշիռը հաշուի չենք առել:

14 III.1 կտորուած դրամի կշիռը հաշուի չենք առել: Փակագծերում՝ դրամների միջին կշիռը՝ III.17-ը (2.09 գ) ներառեալ:

15 IV.1 կտորուած դրամի կշիռը հաշուի չենք առել:

16 Տե՛ս **Ռ. Վարդանեան**, *Արտաշատ II-ի դրամները*, Երեւան, 2004, էջ 102-106:

17 ՀՊԹ 1987/54, 1.75 գ, 12.1 մմ:

18 Պարթեական դրամների վրայ արամէական տառերի գրելաճը, սակայն, բոլորովին ուրիշ էր՝ կէտագծային, այսինքն՝ այնպիսին, ինչպիսին նոյն դրամի վրայ զետեղուած լուսատառ գրութիւնների ոճն էր:

19 Շնորհակալութիւն ենք յայտնում ժ. Խաչատրեանին՝ բուլլաների արամէերէն գրութիւններին ծանօթանալու նպատակով դրանց լուսանկարները մեզ տրամադրելու համար:

20 Այս տառը I.4-ի վրայ երեւում է Ը-ի տեսքով:

21 Այս տառի երկու մասնիկները միմեանցից անջատուած են երեւում I.10-ի՝ Ը և I.4-ի՝ Ը վրայ:

22 Արամէատառ դրամական գրութիւններում տառաձեւերի «ազատ մեկնաբանութեան» օրինակները, տառաձեւերի բազմազանութիւնը, տարբեր տիպի սխալները յատկապէս շատ են Պարսի եւ Սողդիանայի դրամների վրայ, տե՛ս աղ. 5 եւ **M. Agram**, *Nomina propria iranica in nummis* [= *Iranisches personennamenbuch*, band IV], Wien, 1986, Tabellen.

23 **И. М. Дьяконов**, **К. Б. Старкова**, *Надписи Артаксия (Арташеса I), царя Армении*, «Вестник древней истории» 2 (1955), с. 165, рис. 1; **К. В. Тревер**, *Очерки по истории культуры древней Армении*, Москва, 1953, с. 163, рис. 31: Այստեղ *խեթ*-ը սխալ է պատկերուած:

24 **И. М. Дьяконов**, **К. Б. Старкова**, *Надписи Артаксия...*, с. 166, рис. 2; **К. В. Тревер**, *Очерки по истории культуры...*, с. 163, рис. 32.

25 **А. Г. Периханян**, *Арамейская надпись из Зангезура*, ՊԲՀ, թիւ 4 (1965), էջ 111, նկ. 1-2:

26 **Գ. Տիրացեան**, *Արտաշէս Ա-ի նորագիտ արամէատառ արձանագրութիւնը*, «Տեղեկագիր հասարակական գիտութիւնների», թիւ 10 (1957), էջ 105-109, **Г. А. Тирацян**, *Новонайденная надпись Арташеса I, царя Армении*, «Вестник древней истории», 1 (1959).

27 **Գ. Կարախանեան**, *Արամէական նորայայտ երկու արձանագրութիւններ*, ՊԲՀ, թիւ 3 (1971), **A. Périrkhanian**, *Les inscriptions araméennes du roi Artachès*, "Revue des études arméniennes", 8 (1971), fig. 1.

28 **Գ. Կարախանեան**, *Արամէական նորայայտ...*, **A. Périrkhanian**, *Les inscriptions araméennes...*, fig. 2.

29 **Գ. Տիրացեան**, *Արտաշէս Ա-ի եւս մէկ նորագիտ արամէական արձանագրութիւն*, ՊԲՀ, թիւ 4 (1977), էջ 255, **Г. А. Тирацян**, *Еще одна арамейская надпись Арташеса I, царя Армении*, «Вестник древней истории», 4 (1980).

30 BNL 1617. Շնորհակալութիւն ենք յայտնում Դոմինիկ Ժերէնին՝ այդ դրամի գիպսէ պատճէնը մեզ տրամադրելու համար:

31 Արքայի թագը բարձր է ու նեղ, ինչպէս մեղու, թռչուն եւ դէմք դարձերեսներով դրամների վրայ է. կատարումը բաւական կոպիտ է: Այս թողարկման համեմատաբար լաւ պահպանուած օրինակների վրայ երեւում է, սակայն, որ արքան անմօրուս է, այլ կերպ են պատկերուած վզկալը, ականջակալը եւ գլխի հետեւում կախուած ապարօշի ժապաւէնները:

32 ΒΑΣΙΛΕΩΣ ΜΕΓΑΛΟΥ / ΤΙΓΡΑΝΟΥ, սակայն ինձ յայտնի չէ օրինակ, որի վրայ այս գրութիւնն ամբողջովին տեղադրուած լինի:

33 **D. Sellwood**, *An Introduction to the Coinage of Parthia*, London, 1980, Types 3 and 4, pp. 23-24.

34 Նոյն տեղում:

35 **D. Sellwood**, *An Introduction...*, Types 57, 58 etc..



36 Նիսայի տեքստերը գերազանցապէս զինու մասնների դիւանատան նախնական հաշուառման փաստաթղթեր են, որոնք, որպէս կանոն, պարունակում են մի շարք քարացած արամէական բանաձեւեր: Տեքստերում կան զգալի քանակութեամբ բառեր՝ գրուած իրաներէն (այդ թում նաեւ՝ բայական ձեւեր), ինչպէս նաեւ՝ արամէական բայական ձեւեր՝ իրանական վերջաւորութիւններով (հնչյունական բաղադրիչներով): **И. М. Дьяконов**, **В. А. Лившиц**, *Документы из Нисы, I в. до н.э. Предварительные итоги работы*, Москва, 1960, с. 30-32; **И. М. Дьяконов**, **В. А. Лившиц**, *Парфянское царское хозяйство в Нисе I в. до н.э.*, «Вестник древней истории», 2 (1960), с. 15-16.

37 Այդ դրամները Արտաշէս I-ին վերագրելը բացառում է, քանի որ դրանք իրենց պատկերագրութեամբ, ոճով, ձեւաւորմամբ ու պատրաստուածքով չեն տեղադրուում մ.թ.ա. II դարում Սելեւկեանների ազդեցութեան ոլորտում իրագործուած դրամաթողարկումներին բնորոշ օրինաչափութիւնների շրջանակի մէջ: Արտաշէս III-ին վերագրելը նոյնպէս հնարար չէ, այս անգամ՝ ելնելով պատմաքաղաքական իրողութիւններից. Ջենոն-Արտաշէսը հռոմէական դրածոյ էր եւ 17 տարի թագաւորեց Հռոմի հովանուները: Ուստի հիմք չկայ նրան վերագրելու դրամներ, որոնցում ոչ միայն չկայ հռոմէական ազդեցութիւն, այլեւ այքի են ընկնում ընդգծուած արեւելեան յատկանիշներ:

38 **Մ. Զարդարեան**, *Եզակի դրամներ Արտաշատի պեղումներից*, *Արտաշէս Բ, Դրամաշրջանառութիւնը Հայաստանում*. Հանրապետական գիտական նստաշրջան, 21 նոյեմբերի. Ջեկուցումների թեզիսներ, Երեւան, 1998, էջ 5-7: **Ռ. Վարդանեան**, *Արտաշէս II-ի տարեթուակիր պղնձէ դրամը՝ Արտաշատում պոմպէլուեան տոմարի կիրառման եւս մի վկայութիւն*, «Հանդէս ամսօրեայ», 1-12 (2000), էջ 119-134:

39 **Մ. Զարդարեան**, *Եզակի դրամներ...*, **Ռ. Վարդանեան**, *Արտաշէս II-ի տարեթուակիր պղնձէ դրամը...*:

40 Տիգրան III-ի մահուան թիւն ընդունուած է համարել Ք.ա. 8 թուականը, սակայն ո՞րն է դրա հիմնաւորումը: Յ. Մանանդեան, *Երկեր*, հտ. Ա, Երեւան, 1977, էջ 289-290. «Տիգրան Գ-ի մահուան թուականը որոշ չէ: Պէտք է ասել, որ Արտաշէս Բ-ից յետոյ նրա յաջորդներին վերաբերող ժամանակագրութեան մէջ այնպիսի մեծ խառնակութիւն է տիրում, որ նրանց թագաւորութեան թուականները կարելի է որոշել միայն մօտաւոր կերպով»: Վերջին Արտաշիսեանների վերաբերեալ արտայայտուած բոլոր հեղինակները, ներառեալ Յ. Մանանդեանը, ընդունում են Cambridge Ancient History-ում առաջարկուած ժամանակագրութիւնը, տե՛ս Մանանդեան, *նշ. աշխ.*, էջ 290-298, **Գ. Խ. Սարգսեան**, *Հայաստանը Արտաշատ II-ի եւ նրա յաջորդների ժամանակաշրջանում*, - Հայ ժողովրդի պատմութիւն, հտ. Ա, Երեւան, 1971, էջ 631-634:





I.16 (3.5 x)



II.4 (3.5 x)



III.9 (3 x)



IV.18 (2.5 x)

Հայաստանում յայտնաբերուած արամեագիր ընթերցուած արձանագրութիւնների տառաձեւերի համեմատական աղիւսակ 1

	Կարմիր	Կզնութ	Ծակքար	Սպիտակ	Իշխա- նասար	Թերուտ 1	Թերուտ 2	Սիսիան (թաս)	Գառնի
Յ	𐎶		𐎶𐎶	𐎶𐎶	𐎶	𐎶𐎶	𐎶𐎶	𐎶	𐎶
Ե	𐎷	𐎷	𐎷	𐎷	𐎷	𐎷𐎷	𐎷𐎷	𐎷	𐎷
Գ									𐎸
Ծ	𐎹		𐎹	𐎹		𐎹	𐎹		
Խ						𐎺	𐎺	𐎺	𐎺
Վ	𐎻		𐎻	𐎻	𐎻	𐎻	𐎻		𐎻
Զ	𐎼	𐎼	𐎼	𐎼	𐎼	𐎼	𐎼	𐎼	𐎼
Կ	𐎽	𐎽	𐎽	𐎽	𐎽	𐎽	𐎽	𐎽	
Թ				𐎿	𐎿	𐎿	𐎿	𐎿	
Մ	𐏀	𐏀	𐏀	𐏀	𐏀	𐏀	𐏀	𐏀	𐏀
Կ	𐏁	𐏁	𐏁	𐏁	𐏁	𐏁	𐏁	𐏁	𐏁
Լ	𐏂	𐏂	𐏂	𐏂	𐏂	𐏂	𐏂	𐏂	𐏂
Խ	𐏃		𐏃	𐏃	𐏃	𐏃	𐏃	𐏃	𐏃
Ն	𐏄	𐏄	𐏄	𐏄	𐏄	𐏄	𐏄	𐏄	
Տ	𐏅	𐏅	𐏅			𐏅	𐏅	𐏅	𐏅
Ր									
Փ					𐏈	𐏈	𐏈	𐏈	
Տ									
Չ	𐏉		𐏉	𐏉	𐏉	𐏉	𐏉	𐏉	
Ր	𐏊	𐏊	𐏊	𐏊	𐏊	𐏊	𐏊	𐏊	𐏊
Տ	𐏋	𐏋	𐏋	𐏋	𐏋	𐏋	𐏋		
Տ	𐏌	𐏌	𐏌	𐏌	𐏌	𐏌	𐏌	𐏌	

Դրամական գրություններում արամեական տառածեղերի համեմատական աղիւսակ 2

	չ	ծ	ց	ճ	ձ	ւ	Յ	Ֆ	է	յ	կ	լ	մ	ն	ս	ր	ր	ժ	զ	ր	ճ	է
Արամեական տառապատկեր	𐎠	𐎡	𐎢	𐎣	𐎤	𐎥	𐎦	𐎧	𐎨	𐎩	𐎪	𐎫	𐎬	𐎭	𐎮	𐎯	𐎰	𐎱	𐎲	𐎳	𐎴	𐎵
Պարսկ	𐎠	𐎡	𐎢	𐎣	𐎤	𐎥	𐎦	𐎧	𐎨	𐎩	𐎪	𐎫	𐎬	𐎭	𐎮	𐎯	𐎰	𐎱	𐎲	𐎳	𐎴	𐎵
Պարսեաստանի	𐎠	𐎡	𐎢	𐎣	𐎤	𐎥	𐎦	𐎧	𐎨	𐎩	𐎪	𐎫	𐎬	𐎭	𐎮	𐎯	𐎰	𐎱	𐎲	𐎳	𐎴	𐎵
Սողդիանայի	𐎠	𐎡	𐎢	𐎣	𐎤	𐎥	𐎦	𐎧	𐎨	𐎩	𐎪	𐎫	𐎬	𐎭	𐎮	𐎯	𐎰	𐎱	𐎲	𐎳	𐎴	𐎵
Էլիմայիսի	𐎠	𐎡	𐎢	𐎣	𐎤	𐎥	𐎦	𐎧	𐎨	𐎩	𐎪	𐎫	𐎬	𐎭	𐎮	𐎯	𐎰	𐎱	𐎲	𐎳	𐎴	𐎵
Խաչուրի	𐎠	𐎡	𐎢	𐎣	𐎤	𐎥	𐎦	𐎧	𐎨	𐎩	𐎪	𐎫	𐎬	𐎭	𐎮	𐎯	𐎰	𐎱	𐎲	𐎳	𐎴	𐎵
Նաբաթեայի	𐎠	𐎡	𐎢	𐎣	𐎤	𐎥	𐎦	𐎧	𐎨	𐎩	𐎪	𐎫	𐎬	𐎭	𐎮	𐎯	𐎰	𐎱	𐎲	𐎳	𐎴	𐎵

ՀԱՅՈՑ ԳՐԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԹՈՒԱԿԱՆԻ ՇՈՒՐՋ

Բաբկեն Յարութիւնեան

Կորիւնի եւ Հայ այլ պատմիչների տեղեկութիւնների լոյսով վաղուց ի վեր փորձեր են արուել ճշտելու Հայոց գրերի ստեղծման թուականը: Ուսումնասիրողները, քննելով միեւնոյն աղբիւրները, յանգել են երկու հիմնական եզրակացութեան. գրերը ստեղծուել են 404, 405, 406 կամ 407 թուերին, որի համար հիմք են ծառայել Կորիւնի երկի վերջաբանի ժամանակաշրջանի տուեալները, եւ 392-393 թթ. կամ 392-398 թթ. միջոցին, որի համար հիմք են ծառայել մասնաւորապէս Ղազար Փարպեցու տեղեկութիւնները: Եթէ առաջին տեսակէտի օգտին հանդէս են եկել այնպիսի դէմքեր, ինչպիսիք են Նորայր Բիւզանդացին, Հ. Ն. Ակիւնեանը, Գ. Ֆետիսեանը, Հ. Յ. Թորոսեանը, Հ. Աճառեանը, Մ. Աբեղեանը, Ե. Տէր-Մինասեանը, Ա. Աբրահամեանը, Ա. Մարտիրոսեանը եւ ուրիշներ, ապա երկրորդ եզրակացութիւնը պաշտպանել են այնպիսի նշանաւոր հայագէտներ, ինչպիսիք են Մ. Օրմանեանը, Լէօն, Ն. Ադոնցը եւ Յ. Մանանդեանը: Չիշտ է, եղել են նաեւ գրերի ստեղծման այլ թուականների առաջարկներ, ասենք Գ. Տէրկանների առաջարկները, ասենք Գ. Տէրկանների Մկրտչեանի (413), Յ. Մարքուարթի (402/3) եւ այլոց կողմից, սակայն դրանց մտադիր չենք անդրադառնալ, քանի որ դրանք ոչնչով հիմնաւորուած չեն: Առաջադրեալ եզրակացութիւն է ստացել Հայագիտութեան մէջ եւ, ինչպէս նշեցինք, հիմնաւորութեան մէջ եւ, ինչպէս նշեցինք, հիմնաւորութեան մէջ Կորիւնի երկի վերջաբանի ժամա-

նակագրական տուեալներով, որոնք Հաստուտ են, որ «... լինի համար ամաց հաւատոց երանելոյն (իմա՛ Մաշտոցի-Յ. Բ.) ամբ քառասուն եւ հինգ, եւ ի դպրութեան Հայոց մինչեւ ցվախճան արքոյն՝ ամբ երեսուն եւ հինգ, որք համարին այսպէս. թագաւորեալ Կրմանայ Պարսից արքայի ամս վեց. եւ Յազկերտի ամս քսան եւ մի [եւ Վրամայ ութ եւ տասն], եւ յառաջնումն ամի երկրորդ Յազկերտի որդոյ Վրամայ վախճանեցաւ երանելին:

Եւ արդ առնու համար ամաց արքոց հաւատոց ի չորրորդում ամէն Կրմանայ արքայի մինչեւ ցառաջին ամն երկրորդ Յազկերտի որդոյ Վրամայ, եւ դպրութեան Հայոց յութերորդ ամէ Յազկերտի առեալ սկիզբն՝: Կորիւնի երկի հրատարակիչ Մանուկ Աբեղեանը, քննութեան առնելով նշուած տուեալները, եզրակացնում է, որ բնագրի մէջ պակասում են Վրամ թագաւորի գահակալութեան տարիները, ըստ որում, նրա կարծիքով, սկզբնապէս անպայման եղել է այն, քանի որ այլապէս Մաշտոցի կրօնաւորութեան տարիների հաշիւը սխալ կը լինի: Գումարելով Կրմանի թագաւորութեան 6 (ի դէպ, բնագրում նրա անունը պահպանուել է «Դիսմոնայ» սխալ գրութեամբ), Յազկերտ Ա-ի իշխանութեան 21, երկու չպահպանուած Վրամ թագաւորի 18 տարիները եւ հաշուարկից դուրս թողնելով Յազկերտ Բ-ի գահակալութեան առաջին տարին՝ հեղինակը ստանում է 45 թիւը²: Առաջին հայեացքից Կորիւնի երկի յիշեալ ժամանակագրական տուեալները անխոցե-